Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար Է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



K2. Խնամքի ստացում կրոնական, ոչ բժշկական առողջապահական խնամքի հաստատությունում	85
L. Տևական օգտագործման բժշկական սարքավորում (DME)	86
L1. DME՝ որպես մեր ծրագրի անդամ	86
L2. DME-ի սեփականություն, եթե անցնեք Original Medicare-ին.....	87
L3. Թթվածնային սարքավորումների նպաստներ՝ որպես մեր ծրագրի անդամ.....	88
L4. Թթվածնային սարքավորումներ, երբ դուք փոխում եք Original Medicare-ի կամ Medicare Advantage (MA) մեկ այլ ծրագրի	88

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007
հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում
ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից
սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են
երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար E: **Լրացուցիչ**
 տեղեկությունների համար այցելեք www.wellcare.com/healthnetCA:

A. Տեղեկատվություն ծառայությունների և մատակարարների մասին

Ծառայություններն առողջապահական խնամք, երկարատև ծառայություններն ու աջակցությունը (LTSS), պաշարները, վարքագծային առողջության ծառայությունները, դեղատոմսով ու առանց դեղատոմսի դեղերը, սարքավորումն ու այլ ծառայություններն են: **Ապահովագրված ծառայություններն** այս ծառայություններից ցանկացածներն են, որոնց համար վճարում է մեր ծրագիրը: Ապահովագրված բուժխնամքը, վարքագծային առողջությունը և LTSS-ը գտնվում են **Գլուխ 4**-ում՝ ձեր *Անդամի ձեռնարկում*: Դեղատոմսով և առանց դեղատոմսի դեղերի ապահովագրական ծառայությունները գտնվում են **Գլուխ 5**-ում՝ ձեր *Անդամի ձեռնարկում*:

Մատակարարները բժիշկներ, բուժքույրեր և այլ անձինք են, որոնք ձեզ ծառայություններ ու խնամք են տրամադրում: Մատակարարները ներառում են նաև հիվանդանոցներ, տնային առողջության գործակալություններ, կլինիկաներ և այլ վայրեր, որոնք ձեզ տրամադրում են բուժսպասարկում, վարքագծային առողջության ծառայություններ, բժշկական սարքավորում և որոշակի LTSS:

Ցանցային մատակարարներն այն մատակարարներն են, որոնք աշխատում են առողջապահական ծրագրի հետ: Այս մատակարարները համաձայնել են ընդունել մեր վճարումը՝ որպես լրիվ վճարում: Ցանցային մատակարարները ձեզ տրամադրած խնամքի համար հաշիվներն ուղարկում են անմիջապես մեզ: Երբ դուք ցանցային մատակարարի եք այցելում, դուք սովորաբար ոչինչ չեք վճարում ապահովագրված ծառայությունների համար:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



B. Մեր ծրագրի կողմից ապահովագրվող ծառայություններ ստանալու կանոններ

Մեր ծրագիրն ապահովագրում է Medicare-ի և Medi-Cal-ի կողմից ապահովագրվող բոլոր ծառայությունները: Սա ներառում է որոշակի վարքագծային առողջություն և LTSS:

Մեր ծրագիրը հիմնականում կվճարի բուժսպասարկման, վարքագծային առողջության ծառայությունների և LTSS-ի համար, որոնք դուք ստանում եք, երբ հետևում եք մեր կանոններին: Մեր ծրագրի կողմից ապահովագրվելու համար՝

- Ձեր ստացված խնամքը պետք է լինի **ծրագրի նպաստ**: Սա նշանակում է, որ մենք այն ներառել ենք մեր Նպաստների աղյուսակում՝ **Գլուխ 4**, Բաժին D, էջ 96՝ ձեր *Անդամի ձեռնարկում*:
- Խնամքը պետք է համարվի **բժշկական տեսակետից անհրաժեշտ**:
Բժշկական տեսակետին անհրաժեշտ ասելով՝ մենք նկատի ունենք կարևոր ծառայություններ, որոնք ողջամիտ են և պաշտպանում են կյանքը: Բժշկական տեսակետից անհրաժեշտ խնամքն անհրաժեշտ է անհատներին լուրջ հիվանդանալուց կամ հաշմանդամությունից զերծ պահելու համար և նվազեցնելու ծանր ցավը՝ բուժելով հիվանդությունները, հիվանդությունները կամ վնասվածքները: Բժշկական ծառայությունների համար պետք է ունենաք ցանցի **առաջնային խնամքի մատակարար (PCP)**, որը պատվիրում է խնամքը կամ ասում, որ գնաք մեկ այլ բժշկի մոտ: Լինելով ծրագրի անդամ՝ դուք պետք է ընտրեք ցանցի մատակարարին որպես ձեր PCP:
 - Շատ դեպքերում ձեր ցանցի PCP-ն կամ մեր ծրագիրը պետք է նախապես հավանություն տա, նախքան դուք կարող եք այցելել մատակարարի, ով ձեր PCP-ն չէ կամ օգտվել մեր ծրագրի ցանցի այլ մատակարարներից: Սա կոչվում է **ուղեգիր**: Մենք հնարավոր է չփոխհատուցենք ծառայությունների համար, եթե չստանաք հավանություն: Ուղեգրերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն ստանալու համար տե՛ս այս գլխի էջ 59, Բաժին D:
 - Մեր ծրագրի PCP-ները կապված են բժշկական խմբերի հետ: Երբ PCP եք ընտրում, դուք նաև ընտրում եք նրան կցված բժշկական խումբը: Սա նշանակում է, որ ձեր PCP-ն ձեզ ուղարկելու է այն մասնագետների մոտ ու ծառայությունների համար, որոնք նույնպես կցված են իր բժշկական խմբին: Բժշկական խումբը համատեղ աշխատող և մեր ծրագրի հետ պայմանագիր ունեցող PCP-ների, մասնագետների և բուժսպասարկողների մի խումբ է:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007
հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում
ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից
սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են
երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ**
տեղեկությունների համար այցելեք www.wellcare.com/healthnetCA:



- Ձեզ անհրաժեշտ չէ ուղեգիր ձեր PCP-ից շտապ օգնության կամ շտապ անհրաժեշտ խնամքի, կնոջ առողջապահական ծառայություններ մատուցողից կամ այս գլխի Բաժին D1-ում թվարկված որևէ այլ ծառայությունների համար:
- **Դուք պետք է խնամք ստանաք ցանցային մատակարարներից, որոնք կցված են ձեր PCP-ի բժշկական խմբին:** Սովորաբար, մենք չենք ապահովագրում մատակարարի խնամքը, ով չի աշխատում մեր առողջապահական ծրագրի և ձեր PCP-ի բժշկական խմբի հետ: Սա նշանակում է, որ ստիպված կլինեք ամբողջությամբ վճարել մատակարարին տրամադրված ծառայությունների համար: Ահա մի քանի օրինակներ, երբ այս կանոնը չի կիրառվում.
 - Մենք ապահովագրում ենք արտակարգ իրավիճակի կամ շտապ անհրաժեշտ բուժապասարկման համար արտացանցային մատակարարի կողմից (այս մասին լրացուցիչ տեղեկությունների համար տեսեք այլ գլխի Բաժին H):
 - Եթե ձեզ հարկավոր է մեր ծրագրով ապահովագրված խնամք, իսկ մեր ցանցի մատակարարները չեն կարող տրամադրել այն, ապա կարող եք խնամք ստանալ արտացանցային մատակարարից: Եթե ձեզ հարկավոր է այցելել արտացանցային մատակարարի, ապա հարկավոր է ստանալ նախնական թույլտվություն (PA): Նախնական թույլտվության հաստատումից հետո հայցող մատակարարը և ընդունող մատակարարը կտեղեկացվեն հաստատման մասին: Այդ դեպքում մենք կփոխհատուցենք խնամքը ձեզ համար անվճար:
 - Մենք ծածկում ենք երիկամների դիալիզի ծառայությունները, երբ դուք կարճ ժամանակով գտնվում եք մեր ծրագրի սպասարկման տարածքից դուրս, կամ երբ ձեր մատակարարը ժամանակավորապես անհասանելի է կամ անհասանելի է: Դուք կարող եք ստանալ այս ծառայությունները Medicare-ի կողմից հավաստագրված դիալիզի հաստատությունում:
 - Երբ առաջին անգամ եք միանում մեր ծրագրին, ապա կարող եք խնդրել մեզանից որպեսզի կարողանաք շարունակել այցելել ձեր ներկայիս մատակարարին: Մեզանից պահանջվում է հաստատել այս խնդրանքը, եթե մենք կարող ենք հաստատել, որ դուք գոյություն ունեցող հարաբերություն ունեիք մատակարարի հետ՝ որոշ բացառություններով: Տե՛ս **Գլուխ 1**, Բաժին F, Էջ 18՝ ձեր *Անդամի ձեռնարկում*: Եթե մենք հաստատում ենք Ձեր պահանջն, ապա Դուք մինչև 12 ամիս կարող եք շարունակել ծառայությունների համար այցելել այն մատակարարներին, որոնց այժմ

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



այցելում եք: Այդ ընթացքում ձեր խնամքի համակարգողը կապ կհաստատի
ձեզ հետ, որպեսզի օգնի ձեզ մեր ցանցում մատակարար գտնել, որը կցված է
ձեր PCP-ի բժշկական խմբին: 12 ամսից հետո մենք այլևս չենք փոխհատուցի
Ձեր բուժապասարկումը, եթե շարունակեք այցելել այն մատակարարներին,
որոնք մեր ցանցում չեն և կապված չեն Ձեր առաջնային բուժօգնության
օղակի մատակարարի բժշկական խմբի հետ:

Wellcare Dual Align (HMO D-SNP) նոր անդամները. ընդհանուր առմամբ, Medicare-ի ձեր
նպաստներից օգտվելու համար, դուք կգրանցվեք Wellcare Dual Align (HMO D-SNP) պլանում՝
դրան անդամակցելու դիմումին հաջորդող ամսվա 1-ին օրը: Դուք դեռ կարող եք ստանալ ձեր
Medi-Cal ծառայությունները ձեր նախկին Medi-Cal առողջապահական ծրագրից ևս մեկ ամսով:
Այնուհետև, դուք կստանաք ձեր Medi-Cal ծառայությունները Wellcare Dual Align (HMO D-SNP)-
ի միջոցով: Ձեր Medi-Cal ապահովագրության մեջ բաց չի լինի: Եթե հարցեր ունեք,
զանգահարեք մեզ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի
31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի,
8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում
ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.:

C. Ձեր խնամքի համակարգողը

C1. Ինչ է խնամքի համակարգողը

Խնամքի համակարգողն այն հիմնական անձն է, որն աշխատում է ձեր, առողջապահական
ծրագրի ու ձեր խնամքի մատակարարների հետ՝ համոզվելու, որ դուք ստանում եք ձեզ
անհրաժեշտ առողջապահական խնամքը: Խնամքի համակարգողն օգնում է կազմակերպել
առողջապահական խնամքի ծառայությունները, որոնք համապատասխանում են ձեր
առողջապահական խնամքի կարիքներին: Նա աշխատում է ձեզ հետ՝ կազմելու ձեր խնամքի
ծրագիրը: Նրանք կարող են օգնել ձեզ որոշել՝ ով է լինելու ձեր խնամքի թիմում: Ձեր խնամքի
համակարգողը տեղեկություններ է տրամադրում, որոնք անհրաժեշտ են ձեր առողջապահական
խնամքը կառավարելու համար: Սա նաև կօգնի կատարել ճիշտ ընտրություններ ձեզ համար:

C2. Ինչպես դուք կարող եք կապվել ձեր խնամքի համակարգողի հետ

Երբ դառնաք ծրագրի անդամ, ձեզ խնամքի համակարգող կնշանակվի: Ձեր խնամքի
համակարգողը կկապվի ձեզ հետ, երբ անդամագրվեք մեր ծրագրին: Անդամների
ծառայությունների բաժինը նաև կտեղեկացնի, թե ինչպես կարող եք կապվել ձեր խնամքի
համակարգողի հետ: Եթե ձեզ օգնություն է հարկավոր ձեր խնամքի համակարգողի հետ
կապվելու համար, կարող եք դիմել Անդամների ծառայությունների բաժնի:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007
հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում
ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից
սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են
երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ**
տեղեկությունների համար այցելեք www.wellcare.com/healthnetCA:



C3. Ինչպես կարող եք փոխել ձեր խնամքի համակարգողին

Եթե ցանկանում եք փոխել ձեր խնամքի համակարգողին, խնդրում ենք զանգահարել
Անդամների ծառայությունների բաժին:

D. Խնամք մատակարարների կողմից

D1. Խնամք առաջնային խնամքի մատակարարի (PCP) կողմից

Ձեզ խնամք տրամադրելու և այլ կառավարելու համար դուք պետք է PCP ընտրեք: Մեր
ծրագրի PCP-ները կապված են բժշկական խմբերի հետ: Երբ PCP եք ընտրում, դուք նաև
ընտրում եք Նրան կցված բժշկական խումբը:

PCP-ի սահմանումը և ինչ է անում PCP-ն ձեզ համար

Երբ դուք դառնում եք մեր ծրագրի անդամ, դուք պետք է ընտրեք Wellcare by Health Net
ցանցի մատակարար, որը կլինի ձեր PCP-ն: Ձեր PCP-ն բժիշկ է, ով համապատասխանում է
Նահանգային պահանջներին ու պատրաստված է ձեզ հիմնական բժշկական խնամք
տրամադրելու համար: Սա ներառում է բժիշկներ, որոնք տրամադրում են ընդհանուր և/կամ
ընտանեկան բժշկական խնամք, ներքին օրգանների բժշկական խնամք, և
մանկաբարձներ/գինեկոլոգներ (OB/GYNs), որոնք կանանց են խնամք տրամադրում:

Դուք ձեր սովորական և հիմնական խնամքի մեծ մասը ստանալու եք ձեր PCP-ից: Ձեր PCP-
ն կօգնի ձեզ կառավարել մնացած ապահովագրված ծառայությունները, որոնք դուք
ստանում եք որպես մեր ծրագրի անդամ: Սա ներառում է.

- ձեր ռենտգենները,
- լաբորատոր անալիզները,
- թերապիաները,
- խնամք բժիշկներից, ովքեր մասնագետներ են,
- հիվանդանոց ընդունում և
- հետևողական խնամք:

Ձեր ապահովագրված ծառայությունների «համակարգումը» ներառում է ծրագրի այլ
մատակարարների հետ ստուգելի ու խորհրդակցելը ձեր խնամքի ու դրա ընթացքի մասին:
Եթե ձեզ որոշակի տեսակի ապահովագրված ծառայություններ կամ պաշարներ են
հարկավոր, դուք պետք է Նախնական թույլտվություն ստանաք ձեր PCP-ից (օրինակ՝
մասնագետին այցելելու ուղեգրի տրամադրում): Որոշակի ծառայությունների համար ձեր
PCP-ն պետք է Նախնական թույլտվություն (Նախապես հավանություն) ստանա: Եթե ձեզ
անհրաժեշտ ծառայությունը պահանջում է Նախնական թույլտվություն, ձեր PCP-ն պետք է
թույլտվություն խնդրի մեր ծրագրից կամ ձեր բժշկական խմբից: Քանի որ ձեր PCP-ն

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007
հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում
Ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից
սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են
երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ**
տեղեկությունների համար այցելեք www.wellcare.com/healthnetCA:



տրամադրելու և ու կոորդինացնելու և ձեր բժշկական խնամքը, դուք պետք է ձեր անցյալի բոլոր բժշկական արձանագրություններն ուղարկեք ձեր PCP-ի գրասենյակ:

Ինչպես մենք բացատրել ենք վերևում, դուք սկզբից սովորաբար այցելում եք ձեր PCP-ին ձեր սովորական առողջապահական խնամքի կարիքների համար: Երբ ձեր PCP-ն կարծում է, որ ձեզ մասնագիտացված բուժում է հարկավոր, նա պետք է ձեզ ուղեգիր (նախապես հավանություն) տա, որպեսզի դուք այցելեք ծրագրի մասնագետին կամ որոշակի այլ մատակարարներին: Կան միայն մի քանի տեսակի ապահովագրված ծառայություններ, որոնք կարող եք ստանալ առանց ձեր PCP-ի թույլտվության, ինչպես մենք բացատրում ենք ստորև:

Յուրաքանչյուր անդամ ունի PCP: PCP-ն կարող է նույնիսկ կլինիկա լինել: Կանայք կարող են մանկաբարձ/գինեկոլոգ կամ ընտանիքի պլանավորման կլինիկա ընտրել՝ որպես իրենց PCP:

Դուք կարող եք ընտրել ոչ-բժիշկ բժշկական մասնավոր պրակտիկայով զբաղվող մասնագետի՝ որպես ձեր PCP: Ոչ-բժիշկ պրակտիկ բժիշկներ են համարվում՝ վկայագրված մանկաբարձ քույրերը, վկայագրված մասնավոր պրակտիկայով զբաղվող բուժքույրերը և բժշկի օգնականները: Դուք կապված կլինեք վերահսկող PCP-ին, սակայն կշարունակեք ծառայություններ ստանալ ձեր ընտրած ոչ-բժիշկ մասնավոր պրակտիկայով զբաղվող մասնագետից: Դուք կարող եք փոխել պրակտիկ բժշկին՝ փոխելով վերահսկող PCP-ին: Անդամի ID քարտի վրա նշված է վերահսկող PCP-ի անունը: Հնարավոր է, որ որպես ձեր PCP կարողանաք ունենալ մասնագետի: Մասնագետը պետք է ցանկանա ու կարողանա Ձեզ անհրաժեշտ խնամք տրամադրել:

Դաշնային որակավորում ունեցող առողջապահական կենտրոն (FQHC) կամ Գյուղական առողջապահական կլինիկա (RHC) ընտրելը որպես ձեր PCP

FQHC-ը կամ RHC-ը կլինիկա է և կարող է լինել ձեր PCP-ին: FQHC-ները և RHC-ներն առողջապահական կենտրոններ են, որոնք տրամադրում են առաջնային խնամքի ծառայություններ: Չանգահարեք Անդամների ծառայությունների բաժին Wellcare by Health Net-ի հետ աշխատող FQHC-ների և RHC-ների անունները և հասցեներն իմանալու համար կամ փնտրեք *Մատակարարների և դեղատների տեղեկատու* մեջ:

PCP-ի ձեր ընտրությունը

Երբ անդամագրվեք մեր ծրագրին, դուք կընտրեք մեր ցանցի պայմանագիր կնքած բժշկական խումբ: Բժշկական խումբը համատեղ աշխատող և մեր ծրագրի հետ պայմանագիր ունեցող PCP-ների, մասնագետների և բուժսպասարկողների մի խումբ է: Այս պայմանագիր կնքած բժշկական խմբից դուք կընտրեք նաև PCP: Ձեր առաջնային խնամքի բժշկի գրասենյակը պետք է ձեզ համար հեշտ հասանելի լինի: Դուք կարող եք PCP ընտրել, որը գտնվում է ձեր տնից կամ աշխատավայրից 10 մղոն կամ 30 րոպե հեռավորության վրա: Բժշկական խմբեր (և նրանց հետ կապված PCP-ներ ու հիվանդանոցներ) կարող եք գտնել

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



Մատակարարների և դեղատների տեղեկատուի մեջ կամ կարող եք այցելել մեր www.wellcare.com/healthnetCA կայքը:

Մատակարարի հասանելիությունը հաստատելու համար կամ որոշակի PCP-ի մասին հարցնելու համար, խնդրում ենք դիմել Անդամների ծառայությունների բաժին՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.:

Յուրաքանչյուր բժշկական խումբ և PCP ուղեգրեր են տալիս որոշակի ծրագրի մասնագետների մոտ և օգտագործում են որոշակի հիվանդանոցներ իրենց ցանցում: Եթե կա ծրագրի որևէ հատուկ մասնագետ կամ հիվանդանոց, որը դուք ցանկանում եք այցելել, ապա նախ ստուգեք՝ համոզվելու համար, որ մասնագետներն ու հիվանդանոցները տվյալ բժշկական խմբի ու PCP-ի ցանցում են: Ձեր PCP-ի անունն ու գրասենյակի հեռախոսահամարը տպված են ձեր անդամակցության քարտի վրա:

Եթե դուք բժշկական խումբ կամ PCP չեք ընտրում, կամ ընտրում եք այնպիսի բժշկական խումբ կամ PCP, որը հասանելի չէ այս ծրագրում, ապա մենք ավտոմատ կերպով ձեզ կնշանակենք ձեր տանը մոտ գտնվող բժշկական խումբ և PCP:

Ձեր PCP-ին փոխելու մասին տեղեկությունների համար խնդրում ենք կարդալ ստորև՝ «Ձեր PCP-ին փոխելու տարբերակը» բաժինը:

Ձեր PCP-ին փոխելու տարբերակը

Դուք կարող եք ցանկացած ժամանակ ու ցանկացած պատճառով փոխել ձեր PCP-ին: Նաև, հնարավոր է, որ ձեր PCP-ն հեռանա մեր ծրագրի ցանցից: Եթե ձեր PCP-ն դուրս է գալիս մեր ցանցից, մենք կարող ենք օգնել ձեզ գտնել նոր PCP մեր ցանցում:

Ձեր խնդրանքն ուժի մեջ կմտնի մեր ծրագրով դրա ստացման ամսաթվին հաջորդող ամսվա առաջին օրվանից: Ձեր PCP-ին փոխելու համար զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, ժամը՝ 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, ժամը՝ 8 a.m. - 8 p.m. կամ ձեր խնդրանքը ներկայացնելու համար այցելե՛ք՝ մեր կայքը՝ www.wellcare.com/healthnetCA:

Երբ դիմում եք մեզ, անպայման տեղեկացրեք, եթե մասնագետների եք այցելում կամ ստանում եք այլ ապահովագրված ծառայություններ, որոնց համար հարկավոր էր ձեր PCP-ի թույլտվությունը (ինչպես օրինակ՝ տնային առողջապահական ծառայություններ և տևական

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



օգտագործման բժշկական սարքավորում): Անդամների ծառայությունների բաժինը կտեղեկացնի ձեզ, թե ինչպես կարող եք շարունակել ձեր մասնագիտական խնամքը կամ այլ ծառայությունները, որոնք ստանում էիք, երբ փոխեցիք ձեր PCP-ին: Նրանք նաև կստուգեն ու կհամոզվեն, որ ձեր ընտրած PCP-ն սոր հիվանդներ է ընդունում: Անդամների ծառայությունների բաժինը կփոխի ձեր անդամակցության արձանագրությունը, որպեսզի ցույց տա ձեր սոր PCP-ին և կտեղեկացնի՝ երբ է ուժի մեջ մտնում ձեր PCP-ի փոփոխությունը:

Նրանք նաև ձեզ սոր անդամակցության քարտ կուղարկեն, որը պարունակում է ձեր սոր PCP-ի անունն ու հեռախոսահամարը:

Մեր ծրագրի PCP-ները կապված են բժշկական խմբերի հետ: Երբ դուք PCP եք փոխում, հնարավոր է, որ նաև փոխում եք բժշկական խումբը: Փոփոխության համար դիմելու դեպքում անպայման այդ մասին տեղեկացրեք մասնակիցների սպասարկման բաժին անկախ նրանից, արդյոք դիմում եք մասնագետի, թե ստանում եք այլ փոխհատուցվող ծառայություններ, որոնց համար պահանջվում է PCP-ի թույլտվություն: Անդամների ծառայությունների բաժինը ապահովում է, որ կարողանաք շարունակել ձեր մասնագիտական խնամքը կամ այլ ծառայությունները, որոնք ստանում էիք, երբ փոխում եք ձեր PCP-ին:

Ծառայություններ, որոնք կարող եք ստանալ առանց ձեր PCP-ի նախնական հավանության

Շատ դեպքերում ձեզ հարկավոր կլինի հավանություն ստանալ ձեր PCP -ից նախքան այլ մատակարարների այցելելը: Այս հավանությունը կոչվում է **ուղեգիր**: Դուք կարող եք ստանալ ներքոնշյալ ծառայություններն առանց ձեր PCP -ի նախապես հավանության.

- արտակարգ իրավիճակների ծառայություններ ցանցային մատակարարներից կամ արտացանցային մատակարարներից
- հրատապ անհրաժեշտ խնամք ցանցային մատակարարներից
- հրատապ անհրաժեշտ խնամք արտացանցային մատակարարներից, երբ ցանցային մատակարարները ժամանակավորապես հասանելի չեն (օրինակ, երբ դուք ժամանակավորապես գտնվում եք մեր ծրագրի սպասարկման տարածքից դուրս կամ շաբաթ և կիրակի օրերին):

Նշում. Հրատապ անհրաժեշտ խնամքը պետք է լինի անհապաղ և բժշկական տեսակետից անհրաժեշտ:

- Երիկամների դիալիզի ծառայությունները, որոնք ստանում եք Medicare-ով վկայագրված դիալիզի հաստատությունից, երբ դուք ժամանակավորապես գտնվում եք ծրագրի սպասարկման տարածքից դուրս: Չանգահարեք

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



Անդամների ծառայությունների բաժին, նախքան սպասարկման տարածքից հեռանալը: Մենք կարող ենք օգնել ձեզ դիպիզ ստանալ, երբ հեռու եք:

- Պատվաստումներ գրիպի և COVID-19-ի դեմ, ինչպես նաև հեպատիտ B-ի և թոքաբորբի պատվաստումներ այնքան ժամանակ, որքան ստանում եք դրանք ցանցային մատակարարից:
- Կանանց սովորական առողջապահական խնամք և ընտանիքի պլանավորման ծառայություններ: Սա ներառում է կրծքի ստուգումներ, գնման մամոգրամաներ (կրծքի ռենտգեն), Պապ թեստեր և փոքր կոնքի ստուգումներ, եթե դուք դրանք ստանում եք ցանցային մատակարարից:
- Ի լրումն, եթե դուք իրավունք ունեք ստանալ ծառայություններ հնդկական բուժասպարկման մատակարարներից, ապա կարող եք այցելել այդ մատակարարներին առանց ուղեգրի:
- Ընտանիքի պլանավորման ծառայություններ ցանցի մատակարարներից կամ արտացանցային մատակարարներից:
- Հիմնական նախաձեռնական խնամք, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների ծառայություններ, և ՄԻԱՎ (HIV) ստուգում:

Մանրամասների համար տե՛ս **Գլուխ 4**, Բաժին D, Էջ 96, թե որ ապահովագրված ծառայությունները կարող են պահանջել ձեր PCP-ի նախնական հավանությունը, ինչպես օրինակ՝ նախնական թույլտվություն կամ ուղեգիր:

D2. Ինչպես խնամք ստանալ մասնագետներից և ցանցային այլ մատակարարներից

Մասնագետը բժիշկ է, որն առողջապահական խնամքի ծառայություններ է տրամադրում հատուկ հիվանդության կամ մարմնի մասի համար: Մասնագետների շատ տեսակներ կան, ինչպիսիք են՝

- Ուռուցքաբանները բուժում են քաղցկեղ ունեցող հիվանդներին:
- Սրտաբանները բուժում են սրտի խնդիրներ ունեցող հիվանդներին:
- Օրթոպեդները բուժում են ոսկրերի, հոդերի կամ մկանների որոշակի խնդիրներ ունեցող հիվանդներին:

Գրավոր ուղեգիրը կարող է լինել մեկ այցելության համար, կամ կարող է լինել մշտական ուղեգիր մեկից ավելի այցելությունների համար, եթե ձեզ անհրաժեշտ են շարունակական ծառայություններ: Մենք պետք է ձեզ մշտական ուղեգիր տանք որակավորված մասնագետի հետևյալ վիճակներից որևէ մեկի համար.

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



- քրոնիկ (շարունակական) վիճակ,
- կյանքին սպառնացող մտավոր կամ ֆիզիկական հիվանդություն,
- դեգեներատիվ հիվանդություն կամ հաշմանդամություն,
- ցանկացած այլ վիճակ կամ հիվանդություն, որը բավականաչափ լուրջ կամ բարդ է, որպեսզի մասնագետի կողմից բուժում պահանջվի:

Եթե անհրաժեշտության դեպքում գրավոր ուղեգիր չստանաք, հաշիվը կարող է չվճարվել: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին՝ այս էջի ներքևում գտնվող համարով:

Եթե մենք չկարողանանք ձեզ համար գտնել ծրագրի որակավորված ցանցային մատակարար, մենք պետք է ձեզ տրամադրենք որակյալ մասնագետի ծառայության մշտական թույլտվություն հետևյալ վիճակներից որևէ մեկի համար.

- քրոնիկ (շարունակական) վիճակ,
- կյանքին սպառնացող մտավոր կամ ֆիզիկական հիվանդություն,
- դեգեներատիվ հիվանդություն կամ հաշմանդամություն,
- ցանկացած այլ վիճակ կամ հիվանդություն, որը բավականաչափ լուրջ կամ բարդ է, որպեսզի մասնագետի կողմից բուժում պահանջվի:

Եթե անհրաժեշտության դեպքում մեզանից ծառայության թույլտվություն չստանաք, հաշիվը կարող է չվճարվել: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին՝ այս էջի ներքևում տպված համարով:

Որպեսզի կարողանաք մասնագետի այցելել, ձեզ սկզբից սովորաբար հարկավոր է ձեր PCP-ի գրավոր թույլտվությունը (սա կոչվում է մասնագետին այցելելու «ուղեգիր» ստանալ): Շատ կարևոր է ձեր PCP-ից ուղեգիր ստանալ (նախապես հավանություն), նախքան մասնագետի կամ այլ որոշակի մատակարարի այցելելը (կան մի քանի բացառություններ, այդ թվում՝ կանանց սովորական առողջապահական խնամքը): Եթե դուք ուղեգիր (նախապես հավանություն) չունեք, նախքան մասնագետից ծառայություններ ստանալն, ապա հնարավոր է, որ ստիպված լինեք ինքներդ Վճարել այդ ծառայությունների համար:

Եթե մասնագետն ուզում է, որ դուք վերադառնաք հետագա խնամքի համար, սկզբից համոզվեք, որ առաջին այցի համար ձեր PCP-ից ստացված գրավոր ուղեգիրը (նախապես հավանություն) ապահովագրում է մասնագետի լրացուցիչ այցեր:

Յուրաքանչյուր բժշկական խումբ և PCP ուղեգրեր են տալիս որոշակի ծրագրի մասնագետների մոտ և օգտագործում են որոշակի հիվանդանոցներ իրենց ցանցում: Սա նշանակում է, որ

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



բժշկական խումբը և PCP-ն, որն ընտրել էք, կարող են որոշել այն մասնագետներին ու հիվանդանոցները, որոնցից կարող եք օգտվել: Եթե կան հատուկ մասնագետներ կամ հիվանդանոցներ, որոնք ցանկանում եք օգտագործել, ապա պարզեք՝ արդյոք ձեր բժշկական խումբը կամ PCP-ն օգտագործում են այդ մասնագետներին կամ հիվանդանոցները: Սովորաբար, դուք կարող եք ցանկացած պահի փոխել ձեր PCP-ին, եթե ցանկանում եք այցելել ծրագրի մասնագետի կամ գնալ մի հիվանդանոց, որտեղ ձեր ներկա PCP-ն ձեզ չի կարող ուղարկել: Այս գլխի՝ «Ձեր PCP-ին փոխելու տարբերակը» հասվածում, մենք տեղեկացնում ենք, թե ինչպես փոխել ձեր PCP-ին:

Ծառայությունների որոշ տեսակներ պահանջում են նախապես գրավոր հավանություն ստանալ մեր ծրագրից կամ բժշկական խմբից (սա կոչվում է «նախնական թույլտվություն» ստանալ): Նախնական թույլտվությունը հաստատման գործընթաց է, որը տեղի է ունենում նախքան դուք որոշակի ծառայություններ կստանաք: Եթե ձեզ անհրաժեշտ ծառայությունը պահանջում է նախնական թույլտվություն, ձեր PCP-ն կամ ցանցի այլ մատակարար պետք է լիազորում խնդրի մեր ծրագրից կամ ձեր բժշկական խմբից: Խնդրանքը կդիտարկվի և որոշումը (կազմակերպության վճիռը) կուղարկվի ձեզ ու ձեր մատակարարին: Նախնական թույլտվություն պահանջող հատուկ ծառայություններին ծանոթանալու համար տե՛ս այս գրքույկի **Գլուխ 4**, Բաժին D, Էջ 96-ում առկա Նպաստների աղյուսակը:

D3. Երբ մատակարարը լքում է ծրագիրը

Ցանցի մատակարարը, որից օգտվում եք, կարող է լքել մեր ծրագիրը: Եթե ձեր մատակարարներից մեկը հեռանում է մեր ծրագրից, դուք ունեք որոշակի իրավունքներ և պաշտպանություններ, որոնք ամփոփված են ստորև.

- Չնայած նրան, որ մեր մատակարարների ցանցը կարող է փոխվել տարվա ընթացքում, մենք պետք է ձեզ տրամադրենք որակավորված մատակարարներից օգտվելու չընդհատվող հասանելիություն:
- Մենք ձեզ կտեղեկացնենք, որ ձեր մատակարարը լքում է մեր ծրագիրը, որպեսզի դուք ժամանակ ունենաք ընտրել նոր մատակարար:
 - Եթե ձեր առաջնային խնամքի կամ վարքագծային առողջության մատակարարը լքի մեր ծրագիրը, մենք ձեզ կտեղեկացնենք, եթե վերջին երեք տարվա ընթացքում այցելել եք այդ մատակարարին:
 - Եթե ձեր մյուս մատակարարներից որևէ մեկը լքի մեր ծրագիրը, մենք ձեզ կտեղեկացնենք, եթե դուք նշանակված եք մատակարարի մոտ, ներկայումս նրանցից խնամք եք ստանում կամ այցելել եք նրանց վերջին երեք ամսվա ընթացքում:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



- Մենք կօգնենք ընտրել նոր որակավորված ցանցային մատակարար՝ ձեր բուժսպասարկման կարիքները կառավարելու համար:
- Եթե դուք ներկայումս բժշկական բուժում կամ թերապիա եք անցնում ձեր ընթացիկ մատակարարի մոտ, դուք իրավունք ունեք խնդրելու, և մենք կաշխատենք ձեզ հետ՝ ապահովելու համար, որ բժշկական տեսակետից անհրաժեշտ բուժումը կամ թերապիան, որը դուք ստանում եք, շարունակվի:
- Մենք ձեզ տեղեկատվություն կտրամադրենք գրանցման տարբեր ժամանակահատվածների և ծրագրերը փոխելու տարբերակների մասին:
- Եթե մենք չենք կարողանում գտնել որակավորված ցանցային մասնագետ, որը հասանելի է ձեզ, մենք պետք է կազմակերպենք, որպեսզի արտացանցային մասնագետը ձեր խնամք տրամադրի, երբ ցանցային մատակարարը կամ նպաստը հասանելի չէ կամ բավարար չէ ձեր բժշկական կարիքները բավարարելու համար: Դրա համար նախապես պետք է գրավոր հաստատում ստանաք, հակառակ դեպքում հաշիվը չի վճարվի:
- Եթե կարծում եք, որ մենք չենք փոխարինել ձեր նախորդ մատակարարին որակավորված մատակարարով, կամ որ մենք լավ չենք կառավարում ձեր խնամքը, դուք իրավունք ունեք խնամքի որակի վերաբերյալ բողոք ներկայացնել QIO-ին, խնամքի որակի վերաբերյալ գանգատ կամ երկուսն էլ: (Լրացուցիչ տեղեկությունների համար տեսեք **Գլուխ 9**):

Եթե պարզում եք, որ ձեր մատակարարներից մեկը հեռանում է մեր ծրագրից, դիմեք մեզ: Մենք կարող ենք օգնել ձեզ գտնել նոր մատակարար և կառավարել ձեր խնամքը: Մեզ հետ կապ հաստատելու համար խնդրում ենք տեսնել այս էջի ներքևի տեղեկատվությունը:

D4. Ցանցից դուրս պրովայդերներ

Դուք կարող եք այցելել արտացանցային մատակարարին՝ առանց ուղեգրի կամ նախնական թույլտվության արտակարգ իրավիճակների կամ շտապ անհրաժեշտ ծառայությունների համար: Դիալիզի ծառայությունները ESRD-ի անդամների համար, ովքեր ճանապարհորդել են ծրագրի սպասարկման տարածքից դուրս, նույնպես ապահովագրված են առանց նախնական թույլտվության:

- Հակառակ դեպքում, եթե դուք օգտվում եք արտացանցային մատակարարից, դուք պետք է նախնական գրավոր հաստատում ունենաք: Մենք չենք կարող վճարել արտացանցային մատակարարին, ով հավանություն չի ստացել ձեզ ծառայություններ մատուցելու համար:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



- Եթե դուք որոշել եք օգտվել մատակարարից, որը հաստատված չէ, դուք պետք է վճարեք ստացված ծառայությունների ամբողջ արժեքը:

Եթե այցելեք ոչ-ցանցային մատակարարի, ապա այդ մատակարարը պետք է Medicare-ում և/կամ Medi-Cal-ում մասնակցելու իրավունք ունենա:

- Մենք չենք կարող վճարել մի մատակարարի, որը իրավասու չէ մասնակցելու Medicare-ին և/կամ Medi-Cal-ին:
- Եթե այցելեք մի մատակարարի, որն իրավասու չէ Medicare-ին մասնակցելու համար, ապա Դուք պետք է վճարեք ստացված ծառայությունների լրիվ արժեքը:
- Մատակարարները պետք է տեղեկացնեն ձեզ, եթե իրենք իրավասու չեն մասնակցելու Medicare-ին:

E. Երկարատև ծառայություններ ու աջակցություն (LTSS)

LTSS-ը Medi-Cal-ի նպաստային ծառայություն է, որը ներառում է ծառայությունների և աջակցության լայն տեսականի, որոնք օգնում են իրավասու շահառուներին բավարարել օգնության իրենց ամենօրյա կարիքները և բարելավել իրենց կյանքի որակը: Օրինակները ներառում են օգնություն լողանալու, հագնվելու և առօրյա կյանքի այլ հիմնական գործողությունների և ինքնասպասարկման հետ կապված, ինչպես նաև առօրյա խնդիրների հարցում աջակցություն, ինչպիսիք են լվացքը, գնումները և փոխադրումը: LTSS-ները տրամադրվում են երկար ժամանակով, հիմնականում տներում և համայնքներում, բայց նաև հաստատություններում, ինչպիսիք են բուժքույրական հաստատությունները: Ինչպես նկարագրված է WIC Բաժին 14186.1-ում, Medi-Cal-ի ապահովագրված LTSS-ը ներառում է բոլոր հետևյալները.

- a. Տնային աջակցության ծառայություններ (IHSS)՝ համաձայն California-ի Բարեկեցության և հաստատությունների օրենսգրքի **Գլուխ 3**, Հոդված 7-ի (սկսած Բաժին 12300-ով) և Բաժիններ 14132.95, 14132.952 և 14132.956:
- b. Չափահասների համայնքահեն ծառայություններ (CBAS)
- c. Տարեցների համար բազմանպատակ ծառայությունների ծրագրի (MSSP) ծառայություններ
- d. Հմուտ բուժքույրական հաստատության ծառայություններ և ենթասուր խնամքի ծառայություններ:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



LTSS-ը կարող է օգնել ձեզ մնալ տանը և խոսափել հիվանդանոցում կամ հմուտ բուժքույրական հաստատությունում մնալուց: Ձեզ հասանելի կլինեն որոշակի LTSS մեր ծրագրի միջոցով, ներառյալ հմուտ բուժքույրական հաստատության խնամքը, Չափահասների համայնքահեն ծառայությունները (CBAS) և Համայնքային աջակցությունը: LTSS-ի մեկ այլ տեսակ՝ Տնային աջակցության ծառայությունների ծրագիրը հասանելի է ձեր վարչաշրջանի սոցիալական ծառայության գործակալության միջոցով:

Անդամը պետք է համապատասխանի իրավասության պահանջներին և սահմանված չափանիշներին հետևյալ կատեգորիաներից որևէ մեկի (1) կամ ավելիի համար՝ LTSS-ին մուտք գործելու համար.

1. Անդամներ, ովքեր համապատասխանում են Բուժքույրական հաստատություն-A (NF-A) մակարդակի խնամքի կամ ավելի բարձր մակարդակին, ինչպես նաև իրավունակության և բժշկական տեսակետից անհրաժեշտության չափանիշներին, որոնք պարունակվում են Բարեկեցության և հաստատությունների օրենսգրքի հետևյալ բաժիններում՝ 14525(a), (c), (d) և (e); 14526.1(d)(1), (3), (4) և (5); և 14526(e):
2. Անհատներ, ովքեր ունեն ուղեղի օրգանական, ձեռքբերովի կամ տրավմատիկ վնասվածք և/կամ քրոնիկ հոգեկան հիվանդություն և ցուցաբերում են օգնության կամ հսկողության կարիք առնվազն՝
 - a. Առօրյա կյանքի հետևյալ գործողություններից/առօրյա կյանքի գործիքային գործունեություններից (ADLs/IADLs) երկուսի (2) համար. լողանալ, հագնվել, ինքնուրույն կերակրվել, զուգարան գնալ, շրջել, փոխադրվել, դեղորայքի կառավարում և հիգիենա կամ
 - b. Մեկ (1) ADL/IADL վերը թվարկվածից և մեկը (1) հետևյալներից՝ փողի կառավարում, ռեսուրսների հասանելիություն, ճաշի պատրաստում կամ փոխադրում:
3. Միջինից ծանր Ալցհեյմերի հիվանդությամբ կամ այլ դեմենցիա ունեցող անդամներ, որոնք բնութագրվում են հետևյալ փուլերով.
 - a. Փուլ 5. Չափավոր ծանր կոգնիտիվ անկում. ի հայտ են գալիս հիշողության հիմնական բացեր և ճանաչողական ֆունկցիայի դեֆիցիտներ: Առօրյա գործունեության հետ կապված որոշակի օգնությունն էական է դառնում:
 - b. Փուլ 6. Կոգնիտիվ կարողության լուրջ անկում. հիշողության հետ կապված դժվարությունները շարունակում են վատթարանալ, կարող են ի հայտ գալ անհատականության զգալի փոփոխություններ, և տուժած անհատները

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



լայնածավալ օգնության կարիք ունեն առօրյա գործունեության մեջ:

- c. Փուլ 7. Կոգնիտիվ կարողության շատ լուրջ անկում. սա հիվանդության վերջին փուլն է, երբ անհատները կորցնում են իրենց միջավայրին արձագանքելու ունակությունը, խոսելու ունակությունը և, ի վերջո, շարժումը վերահսկելու ունակությունը:
4. Թեթև ճանաչողական խանգարում, ներառյալ չափավոր Ալցհեյմերի հիվանդություն կամ այլ դեմենսիա ունեցող անդամներ, որը բնութագրվում է Ալցհեյմերի հիվանդության Փուլ 4-ի նկարագրիչներով, որոնք սահմանվում են որպես մեղմ կամ վաղ փուլի Ալցհեյմեր, որը բնութագրվում է հետևյալներից մեկով (1) կամ ավելիով.
- a. Վերջին իրադարձությունների մասին գիտելիքների նվազում:
 - b. Դժվար մտավոր թվաբանություն կատարելու խանգարում կամ անկարողություն:
 - c. Բարդ առաջադրանքներ կատարելու կարողության նվազում:
 - d. Անձնական պատմության կրճատված հիշողություն:
 - e. Ազդեցության ենթարկված անհատը կարող է թվալ հնազանդ և հեռացված, հատկապես սոցիալապես կամ մտավոր դժվար իրավիճակներում:
 - f. Շահառուն նաև պահանջում է աջակցություն կամ վերահսկում հետևյալ ADL/IADL-ներից երկուի (2) հարցում՝ լողանալ, հագնվել, ինքնուրույն կերակրվել, գուգարան գնալ, շրջել, տեղափոխել, դեղորայքի կառավարում և հիգիենա:
5. Չարգացման հաշմանդամություն ունեցող անձինք, որոնք համապատասխանում են Տարածաշրջանային կենտրոնի չափանիշներին և իրավասությանը:

F. Վարքագծային առողջության (հոգեկան առողջություն և թմրանյութերի օգտագործման խանգարում) ծառայություններ

Դուք մուտք ունեք բժշկական առումով անհրաժեշտ վարքագծային առողջության ծառայություններ, որոնք Medicare-ը և Medi-Cal-ը ապահովագրում են: Մենք տրամադրում ենք վարքագծային առողջության ծառայությունների հասանելիություն, որոնք

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



ապահովագրված են Medicare-ի և Medi-Cal-ի կառավարվող խնամքով: Մեր ծրագիրը չի տրամադրում Medi-Cal մասնագիտացված հոգեկան առողջության կամ վարչաշրջանային թմրամիջոցների օգտագործման խանգարման ծառայություններ, սակայն այս ծառայությունները հասանելի են ձեզ ձեր վարչաշրջանի վարքագծային առողջության գործակալության միջոցով:

F1. Medi-Cal-ի վարքագծային առողջության ծառայություններ, որոնք տրամադրվում են մեր ծրագրից դուրս

Medi-Cal-ի մասնագիտական հոգեկան առողջության ծառայությունները հասանելի են ձեզ համար վարչաշրջանի մասնագիտական հոգեկան առողջության ծրագրի (MHP) միջոցով, եթե դուք համապատասխանում եք հոգեկան առողջության ծառայությունների բժշկական անհրաժեշտության չափանիշներին: Ստորև բերված արյուսակում թվարկված գործակալությունների կողմից տրամադրվող Medi-Cal հոգեկան առողջության մասնագիտացված ծառայությունները ներառում են.

- մտավոր առողջության ծառայություններ
- դեղորայքի աջակցության ծառայություններ
- ցերեկային ինտենսիվ բուժում
- ցերեկային վերականգնում
- ճգնաժամային միջամտություն
- ճգնաժամային կայունացում
- չափահասների բնակավայրում բուժման ծառայություններ
- ճգնաժամային բնակավայրում բուժման ծառայություններ
- հոգեբուժական առողջության հաստատության ծառայություններ
- հոգեբուժական ստացիոնար հիվանդանոցային ծառայություններ
- թիրախային գործի կառավարում

Medi-Cal կամ Drug Medi-Cal Կազմակերպված առաքման համակարգի ծառայությունները հասանելի են ձեզ Medi-Cal Վճար ծառայության դիմաց (FFS) մատակարարների միջոցով, եթե դուք համապատասխանում եք այս ծառայությունները ստանալու չափանիշներին: Drug Medi-Cal ծառայությունները տրամադրվում են Los Angeles, Sacramento և Tulare վարչաշրջանների կողմից, որոնք ներառում են.

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար E: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



Վարչաշրջան	Գործակալություն
Los Angeles	Թմրամիջոցների չարաշահման կանխարգելում և վերահսկում (SAPC) Los Angeles վարչաշրջանի առողջապահության գործակալություն
Sacramento	Առողջապահական ծառայությունների բաժնի Թմրամիջոցների օգտագործման կանխարգելման և բուժման ծառայություններ
Tulare	Ավրոհոլի և այլ թմրամիջոցների (AOD) կանխարգելման, բուժման և վերականգնման ծառայություններ

- ինտենսիվ ամբուլատոր բուժման ծառայություններ
- բնակելի բուժման ծառայություններ
- ամբուլատոր դեղերի անվճար ծառայություններ
- թմրամիջոցներից բուժման ծառայություններ
- նախընտրելի ծառայություններ ափիոնային կախվածության համար

Drug Medi-Cal կազմակերպված առաքման համակարգի ծառայությունները ներառում են՝

- ամբուլատոր և ինտենսիվ ամբուլատոր ծառայություններ
- դեղորայք կախվածության բուժման համար (նաև կոչվում է Դեղորայքի օգնությամբ բուժում)
- բնակելի/ստացիոնար
- թմրամիջոցների օգտագործումը դադարեցնելու հետևանքների կառավարում
- թմրամիջոցներից բուժման ծառայություններ
- վերականգնման ծառայություններ
- խնամքի համակարգում

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007
հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում
ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից
սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են
երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ**
տեղեկությունների համար այցելեք www.wellcare.com/healthnetCA:



Բացի վերը թվարկված ծառայություններից, դուք կարող եք օգտվել կամավոր ստացիոնար դետոքսիկացիայի ծառայություններից, եթե համապատասխանում եք չափանիշներին:

Դուք նաև կարող եք ստանալ բժշկական տեսակետից անհրաժեշտ Վարքագծային առողջության ծառայություններ, որոնք ապահովագրված են Medicare-ի կողմից և տնօրինվում են Wellcare by Health Net Յոզեֆայն առողջության ցանցի միջոցով, որը ներառում, սակայն չի սահմանափակվում հետևյալներով.

- Ամբուլատոր ծառայություններ. Ամբուլատոր ճգնաժամային միջամտություն, կարճաժամկետ գնահատում և թերապիա, երկարաժամկետ մասնագիտացած թերապիա և ցանկացած վերականգնողական խնամք, որը կապված է թմրանյութերի օգտագործման խանգարման հետ:
- Ստացիոնար ծառայություններ և պարագաներ. Երկու կամ ավելի մահճակալներով սենյակ, այդ թվում՝ հատուկ բուժման բաժանմունքներ, պաշարներ և օժանդակ ծառայություններ, որոնք սովորաբար մատուցվում են հաստատությունում:
- Խնամքի ստացիոնար և այլընտրանքային մակարդակներ. մասնակի հոսպիտալացում և ինտենսիվ ամբուլատոր ծառայություններ Medicare-ի կողմից հավաստագրված հաստատությունում:
- Թունագերծում. Սուր թունագերծման ու թմրանյութերի օգտագործման խանգարման հետ կապված սուր բժշկական վիճակի բուժման ստացիոնար ծառայություններ:
- Արտակարգ իրավիճակների ծառայություններ. զննում, ստուգում ու գնահատում՝ որոշելու համար, թե արդյոք առկա է հոգեբուժական արտակարգ բժշկական վիճակ, ինչպես նաև հոգեբուժական արտակարգ բժշկական վիճակը թեթևացնելու կամ վերացնելու անհրաժեշտ խնամքն ու բուժումը:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007
հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում
ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից
սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են
երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ**
տեղեկությունների համար այցելեք www.wellcare.com/healthnetCA:



Մատակարարների մասին տեղեկությունների համար տեսեք ձեր Մատակարարների և դեղատների տեղեկատու: Կարող եք նաև դիմել Wellcare by Health Net-ի Անդամների ծառայությունների բաժին՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, ժամը՝ 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, ժամը՝ 8 a.m. - 8 p.m. կամ այցելեք՝ մեր կայքը՝ www.wellcare.com/healthnetCA:

Վարքագծային առողջության ծառայությունների բացառությունները և սահմանափակումները

Վարքագծային առողջության ծառայությունների բացառումների և սահմանափակումների ցանկի համար տեսեք **Գլուխ 4**, Բաժին F, Էջ 170: Նպաստներ, որոնք ապահովագրված *չեն* մեր ծրագրով, Medicare-ով կամ Medi-Cal-ով:

Վարքագծային առողջության ծառայությունների բժշկական տեսակետից անհրաժեշտությունը որոշելու գործընթացը

Ծրագիրը պետք է հավաստագրի Վարքագծային առողջության որոշակի ծառայություններն ու պաշարները, որպեսզի դրանք ապահովագրվեն: Ծառայությունների վերաբերյալ մանրամասների համար, որոնք կարող են պահանջել նախնական թույլտվություն, տեսեք **Գլուխ 4**, Բաժին D, Էջ 96: Այս ծառայությունների համար նախնական թույլտվություն ստանալու համար պետք է զանգահարեք Wellcare by Health Net-ի Անդամների ծառայությունների բաժին՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, ժամը՝ 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, ժամը՝ 8 a.m. - 8 p.m.: Ծրագիրը ձեզ կուղարկի մոտակա պայմանագրային հոգեկան առողջության մասնագետի մոտ, որը կգնահատի ձեզ՝ որոշելու, թե արդյոք լրացուցիչ բուժման կարիք կա: Եթե ձեզ բուժում է հարկավոր, պայմանագիր ունեցող հոգեկան առողջության մասնագետը բուժման ծրագիր կմշակի և կներկայացնի այդ ծրագիրը Health Net-ի դիտարկմանը: Բուժման ծրագրի ծառայությունները կապահովագրվեն, եթե հաստատվեն ծրագրի կողմից: Եթե ծրագիրը չի հաստատում բուժման ծրագիրը, ապա այդ վիճակի համար ոչ մի ծառայություններ կամ պաշարներ չեն ապահովագրվելու: Այնուամենայնիվ, ծրագիրը կարող է ուղարկել ձեզ վարչաշրջանի հոգեկան առողջության բաժին, որը կօգնի ձեզ ստանալ անհրաժեշտ խնամքը:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



Wellcare by Health Net-ի և Los Angeles վարչաշրջանի Հոգեկան առողջության բաժնի (DMH) և Los Angeles վարչաշրջանի Հանրային առողջության բաժնի (Թմրանյութերի օգտագործման խանգարման կանխում և վերահսկում) (DPH/SAPC), Riverside վարչաշրջանի Հոգեկան առողջության բաժնի, San Bernadino Վարքագծային առողջության բաժնի և San Diego վարչաշրջանի Վարքագծային առողջության ծառայությունների միջև ուղեգրման ընթացակարգեր.

Wellcare by Health Net-ի Վարքագծային առողջության ծառայությունների ուղեգրերը կարող են արվել բազմաթիվ աղբյուրներից, ներառյալ՝ վարչաշրջանի վարքագծային առողջության մատակարարներից, վարչաշրջանի գործի մենեջերներից, PCP-ներից, անդամներից ու նրանց ընտանիքներից: Ուղեգրման այս աղբյուրները կարող են դիմել մեզ՝ զանգահարելով ձեր Անդամի ID քարտի վրա նշված հեռախոսահամարով: Մենք կհաստատենք իրավասությունը և թույլ կտանք ծառայությունները, եթե անհրաժեշտ են:

Մենք կաշխատենք վարչաշրջանի հետ՝ ձեզ համապատասխան ուղեգրի ու խնամքի համակարգման համար:

Վարչաշրջանի Մասնագիտացված հոգեկան առողջության և/կամ Ալկոհոլի և թմրանյութերի ծառայությունների համար ուղեգրերը կարող են արվել ուղղակիորեն ձեր կողմից:

Խնամքի համակարգման ծառայությունները ներառում են ծառայությունների համակարգում PCP-ների, վարչաշրջանի Վարքագծային առողջության մատակարարների, վարչաշրջանի գործի կառավարիչների, ձեր ու ձեր ընտանիքի կամ խնամակալի միջև, ինչպես անհրաժեշտ է:

Ինչ անել, եթե խնդիր կամ բողոք ունեք Վարքագծային առողջության ծառայության վերաբերյալ

Այս բաժնում ներառված նպաստները ենթակա են բողոքարկման նույն գործընթացին, ինչպես և ցանկացած այլ նպաստները: Բողոք ներկայացնելու մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար տե՛ս **Գլուխ 9**, Բաժին K, Էջ 310:

Ներկայումս Վարքագծային առողջության ծառայություններ ստացող անդամների խնամքի շարունակականությունը

Եթե ներկայումս Վարքագծային առողջության ծառայություններ եք ստանում, ապա կարող եք խնդրել շարունակել այցելել ձեր մատակարարին: Մեզանից պահանջվում է հաստատել այս խնդրանքը, եթե դուք կարող եք ընթացիկ փոխհարաբերություն ցույց տալ ձեր մատակարարի հետ՝ անդամագրմանը նախորդող 12 ամիսների ընթացքում: Եթե ձեր խնդրանքը հաստատվում է, ապա կարող եք շարունակել այցելել ձեր ընթացիկ մատակարարներին մինչև 12 ամիս ժամանակով: Առաջին 12 ամսից հետո մենք այլևս չենք ապահովագրելու ձեր խնամքը, եթե դուք շարունակում եք այցելել արտացանցային մատակարարի: Ձեր խնդրանքի համար

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



օգնություն ստանալու հարցով խնդրում ենք զանգահարել Wellcare by Health Net-ի Անդամների
ծառայությունների բաժին՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից
մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից
կիրակի, 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում
ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.:

G. Տրանսպորտային ծառայություններ

G1. Ոչ արտակարգ իրավիճակների բժշկական տեղափոխում

Դուք իրավունք ունեք ոչ շտապ բժշկական փոխադրման, եթե ունեք բժշկական կարիքներ,
որոնք Ձեզ թույլ չեն տալիս օգտագործել մեքենա, ավտոբուս կամ տաքսի Ձեր
տեսակցություններին: Ոչ շտապ բժշկական փոխադրումներ կարող են տրամադրվել
ապահովագրված ծառայությունների համար, ինչպիսիք են բժշկական, ատամնաբուժական,
հոգեկան առողջությունը, կյուրերի օգտագործումը և դեղատան նշանակումները: Եթե ձեզ
անհրաժեշտ է ոչ շտապ բժշկական փոխադրում, կարող եք խոսել ձեր PCP-ի հետ և խնդրել
այն: Ձեր PCP-ն կորոշի փոխադրման լավագույն տեսակը՝ ձեր կարիքները բավարարելու
համար: Եթե Ձեզ անհրաժեշտ է ոչ շտապ բժշկական փոխադրում, նրանք կնշանակեն այն՝
լրացնելով ձևաթուղթը և այն ներկայացնելով Wellcare Dual Align-ին (HMO D-SNP)՝
հաստատման համար: Կախված ձեր բժշկական կարիքներից, հաստատումը լավ է մեկ
տարվա համար: Ձեր PCP-ն կվերազնահատի ոչ շտապ բժշկական փոխադրման ձեր
կարիքը՝ վերահաստատման համար յուրաքանչյուր 12 ամիսը մեկ:

Ոչ շտապ բժշկական փոխադրամիջոցը շտապօգնության մեքենան է, աղբատարը,
անվասայլակով ֆուրգոնը կամ օդային տրանսպորտը: Wellcare Dual Align-ը (HMO D-SNP) թույլ
է տալիս նվազագույն ծախսերով ապահովագրված փոխադրման եղանակը և
ամենահամապատասխան ոչ շտապ բժշկական փոխադրումը ձեր բժշկական կարիքների
<p>Փոխադրում. Ոչ-բժշկական փոխադրում</p> <p>Medicare-ի և Medi-Cal-ի այս նպաստը թույլ է տալիս դեպի բժշկական ծառայություններ տեղափոխել մարդատար մեքենայով, տաքսիով կամ հանրային/մասնավոր փոխադրումների այլ ձևերով:</p> <p>Պահանջվում է տրանսպորտ՝ անհրաժեշտ բժշկական օգնություն ստանալու համար, ներառյալ ատամնաբուժական տեսակցությունների ճանապարհորդությունը և դեղատոմսով դեղեր վերցնելը:</p> <p>Այս նպաստը չի սահմանափակում ձեր ոչ արտակարգ իրավիճակի բժշկական փոխադրման նպաստը:</p> <p>Մեր Medicare ծրագիրը ներառում է 24 միակողմանի փոխադրումներ մեր սպասարկման տարածքում: 24-ից ավել փոխադրումներն ապահովագրվում են Medi-Cal նպաստների ծրագրով: Այս նպաստը օգնում է ձեզ ստանալու անհրաժեշտ ինսամբը և ծառայությունները: Դուք կարող եք ստանալ ուղևորման հնարավորություն դեպի ձեր առողջապահական կենտրոնը, ինչպես ձեր բժիշկները, մասնագետները և ատամնաբույժը:</p> <p style="text-align: center;">Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:</p>	<p>\$0</p>

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnet



Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը	Ի՞նչ պետք է վճարեք
<p>Փոխադրում. Ոչ-բժշկական փոխադրում (շարունակություն)</p> <p>Ուղևորությունները սահմանափակվում են. 75 մղոն, միակողմանի, եթե նախապես հաստատված չէ ծրագրով: Ձեր ուղևորությունն ամրագրելու համար զանգահարեք փոխադրման ծառայության հեռախոսահամարով, որն առկա է ձեր ID քարտի հետևի մասում: Ամենօրյա խնամքի համար զանգահարեք մինչև 1 ամիս և առնվազն 3 օր առաջ: Նույնօրյա ուղևորությունները պետք ճշտվեն հասանելիության համար: Ծրագրի կողմից հաստատված վայրերի մասին լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել Անդամների ծառայությունների կենտրոն:</p> <p>Նկատի առեք. Տրանսպորտային ծառայությունները պետք է ստացվեն ներցանցային մատակարարից, որպեսզի ապահովագրվեն ծրագրի կողմից: Տրանսպորտային միջոցները կարող են միաժամանակ տեղափոխել մի քանի ուղևորների և կարող են կանգ առնել ուղևորության ընթացքում անդամի նպատակակետից բացի այլ վայրերում: Ուղևորությունը պլանավորելիս անպայման նշեք որևէ հատուկ կարիք կամ նախասիրություն:</p> <p>Լրացուցիչ տեղեկությունների համար, թե ինչպես ձեռք բերել ոչ շտապ բժշկական փոխադրում, տե՛ս Գլուխ 3, Բաժին G2, էջ 76:</p> <p><i>Չնարավոր է՝ պահանջվի նախնական թույլտվություն (նախապես հավանություն) ապահովագրության համար, բացառությամբ արտակարգ իրավիճակների դեպքերի:</i></p>	


Չարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Չկոտմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnet



Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը	Ի՞նչ պետք է վճարեք
<p>Չրատապ անհրաժեշտ խնամք</p> <p>Չրատապ անհրաժեշտ խնամքն այն խնամքն է, որը տրամադրվում է բուժելու համար՝</p> <ul style="list-style-type: none"> • ոչ արտակարգ իրավիճակ, որն անհապաղ բժշկական խնամք է պահանջում, կամ • անսպասելի բժշկական հիվանդություն, կամ • վնասվածք, կամ • վիճակ, որի համար անմիջապես խնամք է հարկավոր: <p>Եթե ձեզ հրատապ անհրաժեշտ խնամք է հարկավոր, դուք պետք է նախ փորձեք ստանալ այն ցանցային մատակարարից: Այնուամենայնիվ, դուք կարող եք օգտվել արտացանցային մատակարարներից, երբ չեք կարող հասնել ցանցային մատակարարի, քանի որ ձեր հանգամանքների պատճառով հնարավոր չէ կամ անհիմն է ծառայություններ ստանալ ցանցային մատակարարներից (օրինակ, երբ ծրագրի սպասարկման տարածքից դուրս եք, և ձեզ անհապաղ բժշկական տեսակետից անհրաժեշտ ծառայություններ են պետք չնախատեսված վիճակի համար, բայց դա բժշկական արտակարգ իրավիճակ չէ):</p>	<p>\$0</p>

Չարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Չոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnet



Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը	Ի՞նչ պետք է վճարեք
<p> Տեսողության խնամք</p> <p>Մենք կվճարենք հետևյալ ծառայությունների համար՝</p> <ul style="list-style-type: none"> աչքի սովորական ստուգում մեկ անգամ յուրաքանչյուր տարի, և <p>Մենք վճարում ենք բժշկի ամբուլատոր ծառայությունների համար աչքի հիվանդությունների ու վնասվածքների ախտորոշման ու բուժման համար: Օրինակ՝</p> <p>սա ներառում է աչքերի տարեկան ստուգումներ շաքարախտից գոյացող ռետինոպաթիայի համար շաքարախտ ունեցողների համար և տարիքի հետ կապված դեղի բժի բուժում:</p> <p>Գլաուկոմայի բարձր վտանգ ունեցող մարդկանց համար մենք կվճարենք տարեկան մեկ գլաուկոմայի զննման համար: Գլաուկոմայի բարձր վտանգ ունեցող մարդկանցից են՝</p> <ul style="list-style-type: none"> գլաուկոմայի ընտանեկան պատմություն ունեցող մարդիկ շաքարախտով հիվանդ մարդիկ 50 և ավելի բարձր տարիքի աֆրոամերիկացիներ 65 և ավելի բարձր տարիքի հիսպանիկ ամերիկացիներ <p>Մենք վճարում ենք մեկ զույգ ակնոցի կամ հպովի ոսպնյակների համար՝ կատարակտի յուրաքանչյուր վիրահատությունից հետո, որը ներառում է ներակնային ոսպնյակների տեղադրում:</p> <p>Եթե ձեզ արվել են կատարակտի երկու առանձին վիրահատություններ, դուք պետք է ստանաք մեկ զույգ ակնոց յուրաքանչյուր վիրահատությունից հետո: Դուք չեք կարող ստանալ երկու զույգ ակնոց երկրորդ վիրահատությունից հետո, նույնիսկ եթե առաջին վիրահատությունից հետո ակնոց չեք ստացել:</p> <p>Բացի այդ, մեր ծրագիրը ներառում է հետևյալ լրացուցիչ (այսինքն՝ սովորական) տեսողական ծառայությունները.</p> <ul style="list-style-type: none"> Ամեն տարի 1 սովորական աչքի հետազոտություն: Աչքի սովորական հետազոտությունը ներառում է գլաուկոմայի թեստ՝ գլաուկոմայի վտանգի տակ գտնվող մարդկանց համար և ցանցաթաղանթի հետազոտություն՝ դիաբետիկների համար: <p style="text-align: center;">Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:</p>	<p>\$0</p>


Չարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnet



Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը	Ի՞նչ պետք է վճարեք
<p>Տեսողության խնամք (շարունակություն)</p> <ul style="list-style-type: none"> • Անսահմանափակ դեղատոմսով ակնոցներ ամեն տարի մինչև \$300 ամեն տարի առավելագույն նպաստը: Ծածկված ակնոցները ներառում են հետևյալներից որևէ մեկը. <ul style="list-style-type: none"> ○ Ակնոցներ (շրջանակ և ոսպնյակներ) կամ ○ Միայն ակնոցի ոսպնյակներ կամ ○ Ակնոցի շրջանակներ միայն կամ ○ Կոնտակտային ոսպնյակներ ակնոցի փոխարեն կամ ○ Տեսողության ապարատային արդիականացում <p>Նշում. Կոնտակտային ոսպնյակների տեղադրման վճարն ապահովագրված է ծրագրով:</p> <p>Ծրագրի նպաստի առավելագույն ծածկույթը՝ \$300 ամեն տարի, վերաբերում է շրջանակների և/կամ ոսպնյակների մանրածախ արժեքին (ներառյալ ոսպնյակների ցանկացած տարբերակներ, ինչպիսիք են երանգավորումներն ու ծածկույթները):</p> <p>Դուք պատասխանատվություն եք կրում լրացուցիչ (այսինքն՝ սովորական) ակնոցների համար ամեն տարի առավելագույն նպաստից բարձր ցանկացած ծախսերի համար:</p> <p>Medicare-ով ծածկված ակնոցները ներառված չեն լրացուցիչ (այսինքն՝ սովորական) նպաստի առավելագույն չափում: Անդամները չեն կարող օգտագործել իրենց լրացուցիչ ակնոցների նպաստը՝ Medicare-ով ծածկված ակնոցների իրենց ծածկույթը մեծացնելու համար</p> <p>Նշում. սովորական տեսողության ծառայությունների ծածկույթը ծրագրի կողմից առաջարկվող լրացուցիչ նպաստն է: Ոչ Medicare-ը, ոչ Medicaid-ը չեն վճարի այս ծառայությունների ծախսերի ձեր բաժինը:</p> <p>Տեսողական ծառայությունները պետք է ձեռք բերվեն պլանի տեսողական ցանցի միջոցով: Հարցերի համար, թե ինչպես գտնել մատակարար կամ լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին կամ այցելեք մեզ մեր կայքէջում՝ www.wellcare.com/healthnetCA:</p> <p><i>Հնարավոր է՝ պահանջվի նախնական թույլտվություն (նախապես հավանություն) ապահովագրության համար, բացառությամբ արտակարգ իրավիճակների դեպքերի</i></p>	

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnet



Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը	Ի՞նչ պետք է վճարեք
 <p>«Բարի գալուստ Medicare» կանխարգելիչ այց</p> <p>Մենք ապահովագրում ենք մեկանգամյա «Բարի գալուստ Medicare» կանխարգելիչ այց: Այս այցը ներառում է.</p> <ul style="list-style-type: none"> • ձեր առողջության ուսումնասիրություն, • կրթություն ու խորհրդատվություն ձեզ հարկավոր կանխարգելիչ ծառայությունների վերաբերյալ (այդ թվում՝ զննումներ ու սրկումներ), և • ինամբ ստանալու ուղեգրեր, եթե անհրաժեշտ է: <p>Նշում. Մենք ապահովագրում ենք «Բարի գալուստ Medicare» կանխարգելիչ այցը միայն առաջին 12 ամիսների ընթացքում, երբ դուք ունեք Medicare Part B: Երբ նշանակեք ձեր ժամադրություն, ձեր բժշկի գրասենյակին տեղեկացրեք, որ ցանկանում եք նշանակել ձեր «Բարի գալուստ Medicare» կանխարգելիչ այցը:</p>	\$0

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnet



Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը	Ի՞նչ պետք է վճարեք
<p>Wellcare Spendables™</p> <p>Դուք կստանաք \$75 ամսական նաքսապես լիցքավորված Wellcare Spendables™ քարտ: Առավելագույն նպաստը տարեկան կազմում է \$900:</p> <ul style="list-style-type: none"> • Ձեր ամսական նպաստը կտեղափոխվի հաջորդ ամիս, եթե այն չօգտագործվի և կավարտվի ծրագրային տարվա վերջին: <p><u>Ձեր քարտի նպաստը կարելի է օգտագործել հետևյալի համար.</u></p> <p>Առանց դեղատոմսի (OTC) պարագաներ Ձեր քարտը կարող է օգտագործվել մանրածախ առևտրի մասնակից վայրերում, բջջային հավելվածի միջոցով կամ մուտք գործելով ձեր անդամի պորտալ՝ տուն առաքման պատվեր տեղադրելու համար:</p> <p>Ապահովագրված ապրանքները ներառում են՝</p> <ul style="list-style-type: none"> • Ապրանքանիշային անվամբ և ջեներիկ առանց դեղատոմսի պարագաներ • Վիտամիններ, ցավազրկողներ, միսածուխի և ալերգիայի պարագաներ, շաքարախտի պարագաներ • Օգտագործեք ձեր ներծրագրային շտրիխ կոդերի սկաները՝ հաստատված ապրանքները մանրածախ առևտրի վայրերում գտնելու, ձեր անդամի պորտալ մուտք գործելու կամ ձեր կատալոգին հղում կատարելու համար: <p style="text-align: center;">Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:</p>	<p>Wellcare Spendables™ քարտի համար համաապահովագրություն, համավճար կամ նվազեցվող գումար չկա:</p> <p>Նպաստի գումարը կարող է օգտագործվել հետևյալի համար.</p> <ul style="list-style-type: none"> -OTC ապրանքներ -Առողջ սնունդ -Մեքենայի վառելիք՝ պոմպայի մոտ -Կոմունալ ծառայությունների աջակցություն -Տան վարձավճարի աջակցություն <p>Առցանց առաքման վճարների համար կօգտագործվեն նպաստի միջոցները: Առաքումն անվճար է՝ նվազագույնը \$35-ի դեպքում:</p>

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnet



Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը	Ի՞նչ պետք է վճարեք
<p>Wellcare Spendables™ (շարունակություն)</p> <p>Նշում. Որոշակի հանգամանքներում ախտորոշիչ սարքավորումները և ծխելը դադարեցնելու օժանդակ միջոցներն ապահովագրված են ծրագրի բժշկական նպաստների ներքո: Դուք պետք է (հնարավորության դեպքում) օգտվեք մեր ծրագրի բժշկական նպաստներից՝ նախքան այս ապրանքների համար ձեր OTC նպաստը ծախսելը:</p> <p><u>Քանի որ ձեր ծրագիրը մասնակցում է Արժեքի վրա հիմնված ապահովագրական դիզայնի ծրագրին, դուք կարող եք նաև օգտագործել ձեր քարտը հետևյալ նպաստներից որևէ մեկի համար.</u></p> <p>Առողջ սնունդ</p> <p>Դուք կարող եք օգտագործել ձեր քարտն Առողջ սննդի և արտադրանքի համար մասնակից մանրածախ առևտրի կետերում: Պատրաստի կերակուրները հասանելի են առցանց պորտալի միջոցով պատվիրելու համար: Քարտը չի կարող օգտագործվել ծխախոտ կամ ալկոհոլ գնելու համար: Հաստատված ապրանքները ներառում են.</p> <ul style="list-style-type: none"> • Միս և թռչնամիս • Մրգեր և բանջարեղեններ • Սննդային ըմպելիքներ • Օգտագործեք ձեր ներծրագրային շտրիխ կոդերի սկաները՝ հաստատված ապրանքները մանրածախ առևտրի վայրերում գտնելու, ձեր անդամի պորտալ մուտք գործելու կամ ձեր կատալոգին հղում կատարելու համար: <p>Պոմպայի մոտ վճարվող մեքենայի վառելիք</p> <p>Դուք կարող եք օգտագործել ձեր քարտը վառելիքի դիմաց ուղղակիորեն պոմպայի մոտ վճարելու համար: Քարտը չի կարող օգտագործվել ԶԴԱ-ով անձամբ վճարելու համար: Ձեր քարտը կարող է օգտագործվել միայն մինչև առկա նպաստի չափը:</p> <p>Կոմունալ ծառայությունների աջակցություն</p> <p>Դուք կարող եք օգտագործել ձեր քարտն՝ օգնելու ձեր տան կոմունալ ծառայությունների ծախսերին: Մուտք գործեք ձեր անդամի պորտալ՝ կոմունալ ծառայությունների մատակարարներին վճարելու համար կամ վճարեք կոմունալ ծառայությունների մատակարարներին անմիջապես այնտեղ, որտեղ վճարումներ են ընդունվում: Քարտը չի կարող օգտագործվել ավտոմատ կրկնվող վճարումներ կարգավորելու համար:</p> <p>Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:</p>	

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnet



Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը	Ի՞նչ պետք է վճարեք
<p>Wellcare Spendables™ (շարունակություն)</p> <p>Այս նպաստի համար հաստատված ծախսերը ներառում են.</p> <ul style="list-style-type: none"> • Էլեկտրաէներգիայի, գազի, սանիտարական/աղբի և ջրի կոմունալ ծառայություններ • Ֆիքսված և բջջային հեռախոսի սպասարկում • Ինտերնետ ծառայություն • Կաբելային TV (բացառությամբ հեռարձակվող ծառայությունների) • Որոշ նավթային ծախսեր, ինչպիսիք են տան ջեռուցման յուղը <p>Տան վարձավճարի աջակցություն</p> <p>Դուք կարող եք օգտագործել ձեր քարտն՝ օգնելու ձեր տան վարձավճարի ծախսերին: Մուտք գործեք ձեր անդամի պորտալ՝ մատակարարներին վճարելու համար կամ ուղղակիորեն վճարեք մատակարարներին, որտեղ վճարումներ են ընդունվում:</p> <p><u>Ինչպես օգտագործել ձեր քարտը.</u></p> <ul style="list-style-type: none"> • Օգտագործելուց առաջ ակտիվացրեք ձեր քարտը: Ձեր քարտով ստացված նամակում նշված են ցուցումներ: • Այցելեք մասնակից մանրածախ վաճառողի, մուտք գործեք ստորև նշված պորտալի հղումով կամ ներբեռնեք բջջային հավելվածը: • Ընտրեք ձեր հաստատված ապրանքները/ծառայությունները: • Անցեք մանրածախ վաճառողի դրամարկղին և վճարեք ձեր Wellcare Spendables™ քարտով: Առցանց կամ բջջային հավելվածով պատվերների համար մուտքագրեք ձեր քարտի համարը վճարման պահին: • Ձեր քարտը վարկային քարտ չէ, բայց կարող է մուտքագրվել որպես «credit» վճարման համար: Եթե պահանջվի, ձեր PIN-ը ձեր քարտի համարի վերջին 4 նիշերն են: <p>Այս նպաստը շարունակվում է հաջորդ էջում:</p>	

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnet



Ծառայություններ, որոնց համար վճարում է մեր ծրագիրը	Ի՞նչ պետք է վճարեք
<p>Wellcare Spendables™ (շարունակություն)</p> <p>Նշում.</p> <ul style="list-style-type: none"> • Երբ դուք օգտագործեք ձեր ծախսերի նպաստը, դուք պատասխանատու եք ձեր գնումների մնացած արժեքի համար: • Խանութում գնված ապրանքները կարող են վերադարձվել մանրածախ վաճառողներին՝ վերադարձի և փոխանակման քաղաքականության համաձայն: • Եթե ձեր քարտը չի գործում, ինչպես հարկն է կամ չի գործում տեխնիկական խնդրի պատճառով, ապա կապ հաստատեք ներքևում նշված հեռախոսահամարով: • Wellcare-ը պատասխանատվություն չի կրում կորցրված կամ գողացված քարտերի համար: • Wellcare Spendables™ քարտը նախատեսված է միայն ձեր անձնական օգտագործման համար, չի կարող վաճառվել կամ փոխանցվել և չունի կանխիկ արժեք: • Կարող են կիրառվել սահմանափակումներ և արգելքներ: • Սա Medicaid նպաստ չէ: <p>Wellcare Spendables™ քարտի կամ կատալոգ ստանալու մասին տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել 1-855-744-8550, TTY՝ 711: Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. – 8 p.m.: Չանգն անվճար է կամ այցելեք՝ member.membersecurelogin.com</p>	

E. Նպաստներ, որոնք ապահովագրված են մեր ծրագրից դուրս

Մենք չենք ապահովագրում հետևյալ ծառայությունները, բայց դրանք հասանելի են Original Medicare կամ Medi-Cal-ի վճարովի ծառայության միջոցով:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnet



E1. California-ի համայնքային անցումներ (CCT)

California-ի համայնքային անցումները (CCT) ծրագիր է, որն օգտագործում է տեղային Առաջատար կազմակերպությունները, որպեսզի օգնի իրավասու Medi-Cal նպաստառուներին, ովքեր առնվազն 90 օր շարունակ բնակվել են ստացիոնար հաստատությունում, հետ վերադառնալ և ապահով կերպով մնալ համայնքային միջավայրում: CCT ծրագիրը ֆինանսավորում է անցումների համակարգման ծառայությունները նախաանցումային շրջանի ընթացքում և անցումից հետո 365 օրվա ընթացքում, որպեսզի օգնի նպաստառուներին կրկին վերադառնալ համայնքային միջավայր:

Դուք կարող եք ստանալ անցումային ծառայություններ CCT Առաջատար կազմակերպությունների կողմից Ձեր վարչական շրջանում: CCT Առաջատար կազմակերպությունների և վարչական շրջանների ցանկը, որտեղ նրանք սպասարկում են, կարող եք գտնել Առողջապահության դեպարտամենտի վեբ կայքում՝ www.dhcs.ca.gov/services/ltc/Pages/CCT:

CCT անցումների համակարգման ծառայությունների համար.

Medi-Cal-ը վճարում է անցումային համակարգման ծառայությունների համար: Դուք ոչինչ չեք վճարում այդ ծառայությունների համար:

Ձեր CCT անցմանը չվերաբերվող ծառայությունների համար.

Մատակարարը վճարում է մեզ ձեր ծառայությունների համար: Մեր ծրագիրը վճարում է ձեր անցումից հետո մատուցվող ծառայությունների համար: Դուք ոչինչ չեք վճարում այդ ծառայությունների համար:

CCT-ի նախափոխադրման ծառայություններից օգտվելու ժամանակահատվածում մեր վճարած ծառայությունների մասին լրացուցիչ նշված են Նպաստների աղյուսակի **Բաժին D**-ում:

Դեղերի փոխհատուցման նպաստի փոփոխությունն չկա

CCT ծրագիրը չի ծածկում դեղերը: Դուք շարունակում եք ստանալ ձեր սովորական դեղի նպաստը մեր ծրագրի միջոցով: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ձեր *Անդամի ձեռնարկի Գլուխ 5*, Բաժին F, էջ 191:

Նշում. Եթե ձեզ ոչ CCT անցումային ինսամբ է հարկավոր, զանգահարեք ձեր գործի համակարգողին ծառայությունները կազմակերպելու համար: Ոչ CCT անցումային ինսամբը հաստատությունից ձեր անցումին **չվերաբերվող** ինսամբն է:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnet



E2. Medi-Cal Dental ծրագիր

Որոշ ատամնաբուժական ծառայություններ հասանելի են Medi-Cal Dental ծրագրի միջոցով, ներառում է, բայց չի սահմանափակվում դրանով՝ այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են.

- Նախնական ստուգումներ, ռենտգեն, մաքրում և ֆտորիդով բուժումներ
- վերականգնումներ ու պսակներ
- ատամնախողովակների թերապիա
- մասնակի և ամբողջական պրոթեզներ, շտկումներ, վերանորոգումներ և հենարաններ

Ատամնաբուժական նպաստները հասանելի են Medi-Cal Dental Fee-For-Service Program-ով: Լրացուցիչ տեղեկությունների համար, կամ եթե ձեզ օգնություն է հարկավոր Medi-Cal ընդունող ատամնաբույժ գտնելու հարցում, դիմեք Հանրային ծառայությունների բաժնին՝ 1-800-322-6384 հեռախոսահամարով (TTY օգտագործողները պետք է զանգահարեն 1-800-735-2922): Չանգն անվճար է: Medi-Cal Dental ծառայությունների ծրագրի ներկայացուցիչները հասանելի են ձեզ օգնելու համար 8:00 a.m. - 5:00 p.m., երկուշաբթիից ուրբաթ օրերին: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք նաև այցելել dental.dhcs.ca.gov/ կայքը:

Ի լրումն Medi-Cal Dental Fee-For-Service Program-ի՝ դուք կարող եք ատամնաբուժական նպաստներ ստանալ ատամնաբուժական ղեկավարվող խնամքի ծրագրի միջոցով: Ատամնաբուժական ղեկավարվող խնամքի ծրագրերը հասանելի են Sacramento և Los Angeles վարչաշրջաններում: Եթե ցանկանում եք լրացուցիչ տեղեկություններ ստանալ ատամնաբուժական ծրագրերի մասին կամ եթե ցանկանում եք փոխել ձեր ատամնաբուժական ծրագիրը, դիմեք Health Care Options՝ 1-800-430-4263 հեռախոսահամարով (TTY օգտագործողները պետք է զանգահարեն 1-800-430-7077), երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8:00 a.m. - 6:00 p.m.: Չանգն անվճար է:

Նշում. Մեր ծրագիրն առաջարկում է լրացուցիչ ատամնաբուժական ծառայություններ: Լրացուցիչ տեղեկությունների համար տեսեք **Բաժին D**-ի Նպաստների աղյուսակը:

E3. Անբուժելի հիվանդների խնամք

Դուք իրավունք ունեք ընտրել անբուժելի հիվանդների խնամքի հաստատությունը, եթե ձեր մատակարարը և անբուժելի հիվանդների խնամքի հաստատության բժշկական տնօրենը որոշում են, որ դուք անբուժելի կանխատեսում ունեք: Սա նշանակում է, որ դուք ունեք մահացու հիվանդություն, և ակնկալվում է, որ ապրելու եք վեց ամիս կամ ավելի քիչ: Դուք կարող եք խնամք ստանալ Medicare-ով վկայագրված ցանկացած անբուժելի հիվանդների խնամքի հաստատության ծրագրից: Ծրագիրը պետք է օգնի ձեզ գտնել Medicare-ի կողմից հավաստագրված հոսփիսային ծրագրեր: Ձեր հոսփիսի բժիշկը կարող է լինել ցանցային մատակարար կամ արտացանցային մատակարար:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnet



Տեսեք **Բաժին D**-ի Նպաստների աղյուսակը՝ լրացուցիչ տեղեկությունների համար այն մասին, թե ինչի համար ենք մենք վճարում, քանի դեռ դուք ստանում եք անբուժելի հիվանդների խնամքի ծառայություններ:

Անբուժելի հիվանդների խնամքի հաստատության ծառայությունների համար և Medicare Part A կամ Medicare Part B-ով ապահովագրված ծառայությունների համար, որոնք վերաբերում են ձեր անբուժելի կանխատեսմանը

- Անբուժելի հիվանդների խնամքի մատակարարը Medicare-ին հաշիվ կուղարկի ձեր ծառայությունների համար: Medicare-ը կվճարի անբուժելի հիվանդների ծառայությունների համար, որոնք վերաբերում են ձեր մահացու կանխատեսմանը: Դուք ոչինչ չեք վճարում այդ ծառայությունների համար:

Medicare Part A կամ Medicare Part B-ով ապահովագրված ծառայությունների համար, որոնք չեն վերաբերում ձեր անբուժելի կանխատեսմանը

- Մատակարարը Medicare-ին հաշիվ կուղարկի ձեզ մատուցած ծառայությունների համար: Medicare-ը կվճարի Medicare Part A կամ Medicare Part B-ով ապահովագրված ծառայությունների համար: Դուք ոչինչ չեք վճարում այդ ծառայությունների համար:

Դեղերի համար, որոնք կարող են ապահովագրվել մեր ծրագրի Medicare Part D նպաստով.

- Դեղերը երբեք չեն ապահովագրվում միաժամանակ և անբուժելի հիվանդների խնամքի հաստատության, և մեր ծրագրի կողմից: Լրացուցիչ տեղեկությունների համար տես **Գլուխ 5**, Բաժին F3, Էջ 194՝ ձեր *Անդամի ձեռնարկում*:

Նշում. Եթե ձեզ ոչ հոսպիտալին խնամք է հարկավոր, զանգահարեք ձեր գործի համակարգողին ծառայությունները կազմակերպելու համար: Ոչ-հոսպիտալին հիվանդների խնամքը անբուժելի հիվանդության կանխատեսմանը չվերաբերվող խնամքն է:

E4. Տնային աջակցման ծառայություններ (IHSS)

- IHSS ծրագիրը կօգնի վճարել ձեզ մատուցվող ծառայությունների համար, որպեսզի դուք կարողանաք ապահով մնալ ձեր սեփական տանը: IHSS-ը համարվում է տնից դուրս խնամքի այլընտրանք, ինչպիսիք են բուժքույրական տները կամ գիշերօթիկ և խնամքի հաստատությունները:
- Ծառայությունների տեսակները, որոնք կարող են թույլատրվել IHSS-ի միջոցով՝ տնային մաքրություն, ճաշի պատրաստում, վրացք, մթերային գնումներ, անձնական խնամքի ծառայություններ (օրինակ՝ աղիների և միզապարկի խնամք, լոզանք, խնամք և պարամեդիկական ծառայություններ), բժշկական տեսակցություններին ուղեկցելը և պաշտպանական հսկողությունը մտավոր խնդիրներ ունեցողների համար:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnet



- Ձեր խնամքի համակարգողը կարող է օգնել ձեզ դիմել IHSS-ի համար ձեր վարչաշրջանի սոցիալական ծառայության գործակալությունում: Տեղամասի սոցիալական ծառայության գործակալության հետ կապ հաստատելու համար տե՛ս **Գլուխ 2**, Բաժին J, Էջ 43:

E5. 1915(c) Տան և համայնքի վրա հիմնված ծառայություններից (HCBS) հրաժարման ծրագրեր

Աջակցությամբ ապրելու հրաժարում (ALW)

- Աջակցությամբ ապրելու հրաժարումը (ALW) Medi-Cal-ի իրավասու շահառուներին առաջարկում է աջակցվող միջավայրում բնակվելու ընտրություն՝ որպես բուժքույրական հաստատությունում երկարաժամկետ տեղավորման այլընտրանք: ALW-ի նպատակն է հեշտացնել բուժքույրական հաստատությունից անցումը դեպի տնային և համայնքային միջավայր կամ կանխել հմուտ բուժքույրական հաստատություն ընդունելությունը այն շահառուների համար, ովքեր բուժքույրական հաստատությունում տեղավորվելու անմիջական կարիք ունեն:
- Անդամները, ովքեր ընդգրկված են ALW-ում և անցել են Medi-Cal Managed Care-ին, կարող են մնալ ALW-ում ընդգրկված՝ միաժամանակ ստանալով մեր ծրագրով նախատեսված նպաստները: Մեր ծրագիրը համագործակցում է ձեր ALW խնամքի համակարգող գործակալության հետ՝ ձեր ստացած ծառայությունները համակարգելու համար:
- Ձեր խնամքի համակարգողը կարող է օգնել ձեզ դիմել ALW-ի համար: Մասնակից ALW խնամքի համակարգող գործակալությունների ընթացիկ ցանկը տեսե՛ք <https://www.dhcs.ca.gov/services/ltc/Pages/AssistedLivingWaiver.aspx>:

HCBS հրաժարում Չարգացման հաշմանդամություն (HCBS-DD) ունեցող կալիֆորնիացիների համար

California-ի Ինքնորոշման ծրագրից (SDP) հրաժարում Չարգացման հաշմանդամություն ունեցող անձանց համար

- Գոյություն ունի 1915(c) երկու հրաժարում՝ HCBS-DD հրաժարումը և SDP հրաժարումը, որոնք ծառայություններ են մատուցում այն մարդկանց, ում մոտ ախտորոշվել է զարգացման հաշմանդամություն, որը սկսվում է մինչև անհատի ծննդյան 18-ամյակը և ակնկալվում է, որ կշարունակվի անորոշ ժամանակով: Երկու հրաժարումները որոշակի ծառայություններ ֆինանսավորելու միջոց են, որոնք թույլ են տալիս զարգացման հաշմանդամություն ունեցող անձանց ապրել տանը կամ համայնքում, այլ ոչ թե բնակվել լիցենզավորված առողջապահական հաստատությունում: Այս ծառայությունների ծախսերը համատեղ ֆինանսավորվում են դաշնային կառավարության Medicaid ծրագրի և California-ի Նահանգի կողմից: Ձեր խնամքի համակարգողը կարող է օգնել ձեզ կապվել DD հրաժարման ծառայություններին:

Հարցերի դեպքում զանգահարե՛ք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելե՛ք www.wellcare.com/healthnet



Տան և համայնքի վրա հիմնված այլընտրանքայինից (HCBA) հրաժարում

- HCBA-ի հրաժարումը տրամադրում է խնամքի կառավարման ծառայություններ բուժքույրական տանը կամ հաստատությունում տեղավորման ռիսկի տակ գտնվող անձանց: Խնամքի կառավարման ծառայությունները տրամադրվում են բազմամասնագիտական խնամքի կառավարման թիմի կողմից, որը բաղկացած է բուժքույրից և սոցիալական աշխատողից: Թիմը համակարգում է հրաժարման և նահանգային ծրագրի ծառայությունները (օրինակ՝ բժշկական, վարքագծային առողջություն, Տնային աջակցության ծառայություններ և այլն) և կազմակերպում է տեղական համայնքում հասանելի այլ երկարաժամկետ ծառայություններ և աջակցություն: Խնամքի կառավարման և հրաժարման ծառայությունները տրամադրվում են մասնակցի համայնքային բնակավայրում: Այս բնակավայրը կարող է լինել մասնավոր սեփականություն, ապահովված լինել վարձակալի վարձակալության պայմանագրով կամ մասնակցի ընտանիքի անդամի բնակության վայրում:
- Անդամները, ովքեր ընդգրկված են HCBA հրաժարման մեջ և անցել են Medi-Cal Կառավարվող խնամքին, կարող են մնալ HCBA հրաժարման մեջ ընդգրկված՝ միաժամանակ ստանալով մեր ծրագրով նախատեսված նպաստները: Մեր ծրագիրը համագործակցում է ձեր HCBA հրաժարման խնամքի համակարգող գործակալության հետ՝ ձեր ստացած ծառայությունները համակարգելու համար:
- Ձեր խնամքի համակարգողը կարող է օգնել ձեզ դիմել ALW-ի համար: Լրացուցիչ տեղեկությունների համար տեսեք [https://www.dhcs.ca.gov/services/ltc/Pages/Home-and-Community-Based-\(HCB\)-Alternatives-Waiver.aspx](https://www.dhcs.ca.gov/services/ltc/Pages/Home-and-Community-Based-(HCB)-Alternatives-Waiver.aspx)

Medi-Cal Յրաժարման ծրագիր (MCWP)

- Medi-Cal Յրաժարման ծրագիրը (MCWP) տրամադրում է գործերի համապարփակ կառավարում և անմիջական խնամքի ծառայություններ HIV-ով ապրող անձանց՝ որպես բուժքույրական հաստատության խնամքի կամ հոսպիտալացման այլընտրանք: Գործի կառավարումը մասնակցի վրա կենտրոնացած, թիմային մոտեցում է, որը բաղկացած է գրանցված բուժքույրից և սոցիալական աշխատանքի մենեջերից: Գործի կառավարիչներն աշխատում են մասնակցի և առաջնային բուժաշխատող(ներ)ի, ընտանիքի, խնամակալ(ներ)ի և այլ ծառայություններ մատուցողների հետ՝ գնահատելու խնամքի կարիքները, որպեսզի մասնակցին պահեն իրենց տանը և համայնքում:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnet



- MCWP-ի նպատակներն են. (1) տրամադրել տնային և համայնքային ծառայություններ HIV-ով վարակված անձանց համար, ում այլ կերպ կարող են պահանջվել ինստիտուցիոնալ ծառայություններ, (2) աջակցել մասնակիցներին HIV-ի առողջության կառավարման հարցում, (3) բարելավել սոցիալական և վարքային առողջության աջակցության հասանելիությունը և (4) համակարգել ծառայություններ մատուցողներին և վերացնել ծառայությունների կրկնօրինակումը:
- Անդամները, ովքեր ընդգրկված են MCWP հրաժարման մեջ և անցել են Medi-Cal Կառավարվող խնամքին, կարող են մնալ MCWP հրաժարման մեջ ընդգրկված՝ միաժամանակ ստանալով մեր ծրագրով նախատեսված նպաստները: Մեր ծրագիրը համագործակցում է ձեր MCWP հրաժարման խնամքի համակարգող գործակալության հետ՝ ձեր ստացած ծառայությունները համակարգելու համար:
- Ձեր խնամքի համակարգողը կարող է օգնել ձեզ դիմել MCWP-ի համար: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել https://www.cdph.ca.gov/Programs/CID/DOA/Pages/OA_care_mcwp.aspx:

Տարեցների համար բազմանպատակ ծառայությունների ծրագիր (MSSP)

- Տարեցների համար բազմանպատակ ծառայությունների ծրագիրը (MSSP) տրամադրում է ինչպես սոցիալական, այնպես էլ առողջապահական խնամքի կառավարման ծառայություններ՝ օգնելու անհատներին մնալ իրենց տներում և համայնքներում:
- Թեև ծրագրի մասնակիցների մեծ մասը ստանում է Նաև Տնային աջակցության ծառայություններ, MSSP-ն ապահովում է շարունակական խնամքի համակարգում, մասնակիցներին կապում է այլ անհրաժեշտ համայնքային ծառայությունների և ռեսուրսների հետ, համակարգում է առողջապահական ծառայություններ մատուցողների հետ և գնում է որոշ անհրաժեշտ ծառայություններ, որոնք այլ կերպ հասանելի չեն՝ հաստատություն տեղափոխվելը կանխելու կամ հետաձգելու համար: Խնամքի կառավարման և այլ ծառայությունների ընդհանուր տարեկան համակցված արժեքը պետք է ավելի ցածր լինի, քան որակավորված բուժքույրական հաստատությունում խնամք ստանալու արժեքը:
- Առողջապահության և սոցիալական ծառայությունների մասնագետների թիմը MSSP-ի յուրաքանչյուր մասնակցի տրամադրում է առողջության և հոգեւոցիալական ամբողջական գնահատում՝ անհրաժեշտ ծառայությունները որոշելու համար: Այնուհետև թիմն աշխատում է MSSP-ի մասնակցի, նրա

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnet



բժշկի, ընտանիքի և այլոց հետ՝ անհատական խնամքի ծրագիր մշակելու համար: Ծառայությունները ներառում են.

- խնամքի կառավարում
- մեծահասակների ցերեկային խնամք
- տան աննշան վերանորոգում/սպասարկում
- լրացուցիչ տնային աշխատանք, անձնական խնամք և պաշտպանիչ հսկողության ծառայություններ
- խնամողի հանգստի ծառայություններ
- տրանսպորտային ծառայություններ
- խորհրդատվական և թերապևտիկ ծառայություններ
- սննդի ծառայություններ
- հաղորդակցման ծառայություններ:
- Անդամները, ովքեր ընդգրկված են MSSP հրաժարման մեջ և անցել են MediCal Managed Care-ին, կարող են մնալ MSSP հրաժարման մեջ ընդգրկված՝ միաժամանակ ստանալով մեր ծրագրով նախատեսված նպաստները: Մեր ծրագիրը համագործակցում է ձեր MSSP մատակարարի հետ՝ ձեր ստացած ծառայությունները համակարգելու համար:
- Ձեր խնամքի համակարգողը կարող է օգնել ձեզ դիմել MSSP-ի համար:

Գործակալության կոնտակտային տվյալներ

- San Diego վարչաշրջան. Aging and Independent Services; Զեռախոս՝ 1-855-964-3900 (TTY-711)
- Tulare վարչաշրջան. Kings-Tulare Area Agency on Aging; Զեռախոս՝ 1-559-623-0199 (TTY-711)
- Sacramento վարչաշրջան. California Health Collaborative; Զեռախոս՝ 1-916-374-7739 (TTY-711)
- Los Angeles վարչաշրջան.

Չարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnet



- Human Services Association; Զեռախոս՝ 1-626-358-1185 (TTY-711)
- Huntington Hospital; Զեռախոս՝ 1-626-397-3110 (TTY-711)
- Jewish Family Services of LA; Զեռախոս՝ 1-310-247-0864 (TTY-711)
- Partners in Care; Զեռախոս՝ 1-818-837-3775 (TTY-711)
- Scan Independence at Home; Զեռախոս՝ 1-866-421-1964 (TTY-711)

F. Նպաստներ, որոնք չեն ապահովագրվում մեր ծրագրով, Medicare-ով կամ Medi-Cal-ով

Այս բաժինը ձեզ պատմում է մեր ծրագրի կողմից բացառված նպաստների մասին: «Բացառված» նշանակում է, որ մենք չենք վճարում այդ նպաստների համար: Medicare-ն ու Medi-Cal-ը նույնպես չեն վճարում դրանց համար:

Ներքոհիշյալ ցուցակը նկարագրում է որոշ ծառայություններ ու պարագաներ, որոնք ոչ մի պայմանով չեն ապահովագրվում մեր կողմից, ինչպես նաև որոշները, որոնք բացառված են մեր կողմից միայն հատուկ դեպքերում:

Մենք չենք վճարելու այս հատվածում (կամ այս *Անդամի ձեռնարկի* որևէ այլ մասում) թվարկված բացառված բժշկական նպաստների համար, բացի թվարկված հատուկ պայմաններից: Նույնիսկ եթե Դուք ծառայություններ եք ստանում շտապ օգնության հաստատությունում, ծրագիրը չի վճարի ծառայությունների համար: Եթե կարծում եք, որ մեր ծրագիրը պետք է վճարի չապահովագրված ծառայության համար, ապա կարող եք բողոքարկել: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս **Գլուխ 9**, Բաժին E, Էջ 255՝ ձեր *Անդամի ձեռնարկում*:

Ի հավելումս Նպաստների աղյուսակում նկարագրված ցանկացած բացառումների կամ սահմանափակումների, մեր ծրագիրը չի ներառում հետևյալ կետերը և ծառայությունները.

- ծառայություններ, որոնք համարվում են ոչ «ողջամիտ և բժշկական տեսակետից անհրաժեշտ», ըստ Medicare-ի և Medi-Cal ստանդարտների, եթե մենք դրանք չնշենք որպես ապահովագրված ծառայություններ:
- փորձարարական բժշկական և վիրաբուժական բուժումներ, պարագաներ և դեղամիջոցներ, բացառությամբ այն դեպքերի, երբ Medicare-ը, Medicare-ի կողմից հաստատված կլինիկական հետազոտական հետազոտությունը կամ մեր ծրագիրը չի ներառում դրանք: Կլինիկական հետազոտությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ձեր *Անդամի ձեռնարկի* **Գլուխ 3**, Բաժին I, Էջ 82: Փորձական բուժում ու պարագաներ են համարվում նրանք, որոնք, ընդհանուր առմամբ, չեն ընդունվում բժշկական համայնքի կողմից:

Զարգերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Զոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnet



- հիվանդագին գիրության վիրաբուժական բուժում, բացի այն դեպքից, երբ դա բժշկական տեսակետից անհրաժեշտ է ու ապահովագրվում է Medicare-ով:
- առանձին սենյակ հիվանդանոցում, բացի այն դեպքից, երբ դա բժշկական տեսակետից անհրաժեշտ է
- անձնական հերթապահ բուժքույրեր
- հիվանդանոցային սենյակում կամ բուժքույրական հաստատությունում առկա անձնական պարագաներն, ինչպես օրինակ՝ հեռախոս կամ հեռուստացույց
- լրիվ դրույքով բուժքույրական խնամք ձեր տանը
- ձեր մոտիկ բարեկամների կամ տան անդամների կողմից գանձված վարձերը
- ընտրովի կամ կամավոր բարելավման ընթացակարգեր կամ ծառայություններ (ներառյալ՝ քաշի կորուստ, մազերի երկարացում, սեռական ունակություններ, մարզական ունակություններ, կոսմետիկ նպատակներ, հակածերացման ու մտավոր ունակություններ), բացի բժշկական տեսակետից անհրաժեշտ դեպքերից
- կոսմետիկ վիրաբուժություն կամ կոսմետիկ այլ աշխատանք, եթե միայն անհրաժեշտ չեն պատահական վնասվածքի կամ մարմնի որևէ մասի տձևությունն ուղղելու նպատակ: Այնուամենայնիվ, մենք կվճարենք կրծքի հեռացումից հետո կրծքի վերականգնման ու մյուս կրծքի համապատասխանեցման համար
- քիրոպրակիկայի խնամք, բացի ողնաշարի՝ ձեռքով արվող մանիպուլյացիաներից՝ ըստ ապահովագրության ուղեցույցների
- ոտքերի սովորական խնամք, բացառությամբ այն դեպքերի, որոնք նկարագրված են Բաժին D-ի Նպաստների աղյուսակում՝ պողիատրիկ ծառայություններ
- օրթոպեդիկ կոշիկներ, բացի ոտքի տաբատածիգի մաս կազմող ու տաբատածիգի գնի մեջ մտնող կոշիկներից, կամ շաքարախտով պայմանավորված ոտքի հիվանդություն ունեցող մարդու կոշիկներից
- ոտքերին աջակցող սարքեր, բացի շաքարախտով պայմանավորված ոտքի հիվանդություն ունեցող մարդկանց օրթոպեդիկ կամ թերապևտիկ կոշիկներից
- ճառագայթային կեռատոտումիա, LASIK վիրաբուժություն և վատ տեսողության այլ աջակցություններ

Չարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnet



- ստերիլիզացման ընթացակարգերի չեղարկում և դեղատոմսով չտրվող հակաբեղմնավորիչ պաշարներ
- Նատուրոպատի ծառայություններ (օգտագործվում են բնական կամ այլընտրանքային բուժումներ):
- Վետերանների գործերի (VA) հաստատություններում վետերաններին տրամադրված ծառայություններ: Այնուամենայնիվ, երբ վետերանը արտակարգ իրավիճակի ծառայությունները ստանում է VA հիվանդանոցում և VA-ի ծախսերի բաշխումն ավել է, քան մեր ծրագրի ծախսերի բաշխումն, ապա մենք վետերանին կփոխհատուցենք այդ տարբերությունը: Դուք պատասխանատու եք ձեր ծախսերի բաշխման գումարների համար:

Չարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Չոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnet



Գլուխ 5. Ինչպես ստանալ ձեր ամբուլատոր դեղատոմսով դեղերը

Ներածություն

Այս գլուխը բացատրում է ձեր՝ ամբուլատոր դեղատոմսային դեղերի ստացման կանոնները: Սրանք այն դեղերն են, որոնք նշանակում է ձեր մատակարարը, և դուք ստանում եք դեղատնից կամ փոստով պատվիրելով: Նրանք ներառում են Medicare Part D-ով և Medi-Cal-ով ապահովագրված դեղեր: Հիմնական տերմինները և դրանց բացատրությունները այբբենական կարգով տեղակայված են ձեր *Անդամի ձեռնարկի* վերջին գլխում:

Մենք նույնպես ապահովագրում ենք հետևյալ դեղերը, չնայած դրանք չեն քննարկվում այս գլխում.

- **Medicare Part A-ով ապահովագրված դեղեր:** Սրանք հիմնականում ներառում են դեղեր, որոնք ստանում եք հիվանդանոցում կամ բուժքույրական հաստատությունում գտնվելիս:
- **Medicare Part B-ով ապահովագրված դեղեր:** Սրանք ներառում են քիմիոթերապիայի որոշ դեղեր, որոշ ներարկումներ, որոնք արվում են բժշկի կամ այլ մատակարարի գրասենյակում, ինչպես նաև դիալիզի կլինիկայում ձեզ տրվող դեղեր: Տեղեկանալու համար, թե Medicare Part B-ի որ դեղերն են ապահովագրված, տեսեք **Գլուխ 4**, Բաժին D, Էջ 96՝ ձեր *Անդամի ձեռնարկում*:
- Ի հավելումն ծրագրի Medicare Part D-ի և բժշկական նպաստների ապահովագրության, ձեր դեղերը կարող են ապահովագրվել Original Medicare-ի կողմից, եթե դուք գտնվում եք Medicare հոսփիսում: Լրացուցիչ տեղեկությունների համար տեսեք **Գլուխ 5**, Բաժին F, Էջ 194 «Եթե դուք Medicare-ի կողմից հավաստագրված հոսփիս ծրագրի մեջ եք»:

Մեր ծրագրի ամբուլատոր դեղերի ապահովագրության կանոնները

Մենք սովորաբար ապահովագրում ենք դեղերը, եթե հետևում եք այս հատվածում բերված կանոններին:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, ժամը՝ 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, ժամը՝ 8 a.m. - 8 p.m.: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



Անհրաժեշտ է, որ մեր ցանցի բժիշկ կամ այլ մատակարար ձեզ դեղատոմս դուրս գրի, որը պետք է վավեր լինի գործող նահանգի օրենսդրության համաձայն: Այդ անձը հաճախ ձեր առաջնային խնամքի մատակարարն (PCP) է: Դա կարող է լինել նաև ցանցի մեկ այլ մատակարար, եթե ձեր PCP-ն ձեզ ուղեգիր է տրամադրել խնամք ստանալու համար:

Ձեր դեղատոմս դուրս գրողը **չպետք է** լինի Medicare-ի Բացառությունների կամ Բացառումների ցուցակներում կամ Medi-Cal որևէ ցուցակներում:

Ձեր դեղատոմսը համալրելու համար դուք պետք է այցելեք ցանցի դեղատուն:

Ձեր դեղատոմսով դեղը պետք է լինի մեր ծրագրի *Ապահովագրված դեղերի ցուցակում*: Մենք հակիրճ անվանում ենք այն «Դեղերի ցուցակ»:

- Եթե դեղը Դեղերի ցուցակում չէ, ապա հնարավոր է, որ մենք կարողանանք ապահովագրել այն՝ ձեզ համար բացառություն անելով:
- Բացառության կարգով դիմելու վերաբերյալ տեղեկություն ստանալու համար տե՛ս **Գլուխ 9**, Բաժին G2, էջ 281:
- Խնդրում ենք նաև նկատի ունենալ, որ ձեր կողմից նշանակված դեղը ապահովագրելու հայտը կգնահատվի և՛ Medicare, և՛ Medi-Cal ստանդարտներով:

Ձեր դեղը պետք է օգտագործվի բժշկական տեսակետից ընդունված ցուցումով: Սա նշանակում է, որ դեղի օգտագործումը կամ հաստատված է Սննդի և դեղորայքի վարչության (FDA) կողմից, կամ սատարվում է որոշակի բժշկական գրականությամբ: Ձեր բժիշկը կարող է օգնել ձեզ բացահայտել բժշկական հրահանգները՝ աջակցելու ձեզ նշանակված դեղամիջոցի պահանջվող օգտագործման հարցում: Medi-Cal-ի ապահովագրված դեղերի համար սա նշանակում է այն դեղերի օգտագործում, որոնք խելամիտ են և անհրաժեշտ՝ կյանքը պաշտպանելու, լուրջ հիվանդություն կամ հաշմանդամություն կանխելու կամ սաստիկ ցավը մեղմելու համար՝ հիվանդության կամ վնասվածքի ախտորոշման կամ բուժման միջոցով:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, ժամը՝ 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, ժամը՝ 8 a.m. - 8 p.m.: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



Բովանդակություն

A. Ձեր դեղատոմսերի համալրումը.....	177
A1. Ձեր դեղատոմսի համալրումը ցանցային դեղատանը.....	177
A2. Ձեր Անդամի ID քարտի օգտագործումը դեղատոմս համալրելիս	177
A3. Ինչ անել, եթե փոխում եք ձեր ցանցային դեղատունը.....	177
A4. Ինչ անել, եթե ձեր դեղատունը հեռանում է ցանցից.....	178
A5. Մասնագիտացված դեղատնից օգտվելը	178
A6. Փոստային պատվերով ծառայությունից օգտվելը՝ ձեր դեղը ստանալու համար.....	179
A7. Դեղերի երկարատև պաշար ստանալը.....	181
A8. Դեղատան օգտագործումը, որը մեր ծրագրի ցանցում չէ.....	182
A9. Գումարի հետվերադարձ դեղատոմսի համար	182
B. Մեր ծրագրի Դեղերի ցուցակը.....	183
B1. Մեր Դեղերի ցուցակում ներառված դեղերը.....	183
B2. Ինչպես գտնել մեր Դեղերի ցուցակում ներառված դեղը	184
B3. Դեղեր, որոնք մեր Դեղերի ցուցակում չեն	184
C. Որոշ դեղերի սահմանափակումները.....	186
D. Պատճառներ, թե ինչու ձեր դեղը կարող է չապահովագրվել.....	188
D1. Ժամանակավոր պաշարի ստացումը	188
D2. Ինչպես խնդրել ժամանակավոր պաշար.....	190
D3. Ինչպես բացառություն խնդրել	191
E. Ձեր դեղերի ապահովագրության փոփոխությունները	191
F. Դեղի ապահովագրություն հատուկ դեպքերում.....	194

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007
հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում
ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, ժամը՝ 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից
սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են
երկուշաբթիից ուրբաթ օրերին, ժամը՝ 8 a.m. - 8 p.m.: Չանգն անվճար է: **Լրացուցիչ**
տեղեկությունների համար այցելեք www.wellcare.com/healthnetCA:



F1. Հիվանդանոցում կամ հմուտ բուժքույրական հաստատությունում մնալու համար, որն ընդգրկում է մեր ծրագիրը.....	194
F2. Երկարատև խնամքի հաստատությունում.....	194
F3. Medicare-ի կողմից վկայագրված անբուժելի հիվանդների խնամքի հաստատության ծրագրում.....	194
G. Դեղերի ապահովության և դեղերի տնօրինման մասին ծրագրեր.....	195
G1. Ծրագրեր, որոնք օգնում են մեզ ապահով կերպով դեղեր օգտագործել.....	195
G2. Մասնակիցներին իրենց դեղերը կառավարելու աջակցման ծրագրեր.....	196
G3. Դեղերի կառավարման ծրագիր՝ աջակցելու անդամներին անվտանգ կերպով օգտագործել իրենց ավիոնային դեղորայքը.....	197

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP)՝ 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, ժամը՝ 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, ժամը՝ 8 a.m. - 8 p.m.: Չանզն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



A. Ձեր դեղատոմսերի համալրումը

A1. Ձեր դեղատոմսի համալրումը ցանցային դեղատանը

Շատ դեպքերում մենք կվճարենք ձեր դեղատոմսերի համար միայն, եթե դրանք լցվեն մեր ցանցի դեղատներից: Ցանցի դեղատունը դեղերի խանութ է, որը համաձայնել է դեղատոմսեր համալրել մեր ծրագրի անդամների համար: Դուք կարող եք օգտվել մեր ցանցային դեղատներից յուրաքանչյուրից:

Ցանցի դեղատուն գտնելու համար կարդացեք *Մատակարարների և դեղատների տեղեկատուն*, այցելեք մեր կայքը կամ դիմեք Անդամների ծառայություններ բաժին:

A2. Ձեր Անդամի ID քարտի օգտագործումը դեղատոմս համալրելիս

Դեղատոմսը համալրելու համար **ցույց տվեք ձեր Անդամի ID քարտը** ձեր ցանցային դեղատանը: Ցանցային դեղատունը մեզ կներկայացնի հաշիվներ ձեր ապահովագրված դեղատոմսով դեղերի համար:

Չիշեք, որ ձեզ անհրաժեշտ է ձեր Անդամի ID քարտը կամ Նպաստների և Լուրջ Կարգի Լուրջ Կարգի (BIC)՝ Medi-Cal Rx-ի ապահովագրված դեղերից օգտվելու համար:

Եթե դեղատոմսը լրացնելիս ձեզ հետ չունեք ձեր Անդամի ID քարտը, խնդրեք դեղատանը զանգահարել ծրագրին՝ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար, կամ կարող եք խնդրել դեղատանը փնտրել ձեր ծրագրի գրանցման մասին տեղեկությունները:

Եթե դեղատունը չի կարողանում ստանալ անհրաժեշտ տեղեկությունները, հնարավոր է, որ դուք ստիպված լինեք վճարել դեղատոմսի ամբողջ գինը, երբ վերցնեք այն: Այնուհետև կարող եք մեզ խնդրել ձեզ հետ վճարել: **Եթե չեք կարող վճարել դեղի համար, անմիջապես զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին:** Մենք կանենք ամեն ինչ, որպեսզի օգնենք:

- Եթե ցանկանում եք խնդրել ձեզ հետ վճարել, ապա տեսեք **Գլուխ 7**, Բաժին A, Էջ 209՝ ձեր *Անդամի ձեռնարկում*:
- Եթե ձեզ օգնություն է հարկավոր դեղատոմսը համալրելու համար, դիմեք Անդամների ծառայություններ բաժին կամ ձեր խնամքի համակարգողին:

A3. Ինչ անել, եթե փոխում եք ձեր ցանցային դեղատունը

Եթե դուք փոխեք դեղատները և դեղատոմսով դեղ ստանալու կարիք ունենաք, կարող եք դիմել, որպեսզի մատակարարի կողմից դուրս գրվի նոր դեղատոմս, ինչպես նաև խնդրել, որպեսզի ձեր դեղատունը փոխանցի դեղատոմսը նոր դեղատուն, եթե դեռ համալրումներ են մնացել:

Դուք կարող եք բողոք ներկայացնել կամ Անկախ բժշկական վերանայում (IMR) պահանջել California-ի Կառավարվող առողջապահական խնամքի բաժնի (DMHC) Օգնության կենտրոնից: Ներկայացնելով բողոք՝ DMHC-ը կվերանայի մեր որոշումը և վճիռ կկայացնի: IMR հասանելի է բժշկական բնույթի Medi-Cal-ի կողմից ապահովագրված ցանկացած ծառայության կամ պարագայի համար: IMR-ը ձեր գործի վերանայումն է բժիշկների կողմից, որոնք մեր ծրագրի կամ DMHC-ի մաս չեն կազմում: Եթե IMR-ը որոշում է կայացնում ձեր օգտին, ապա մենք պետք է ձեզ տրամադրենք պահանջվող ծառայությունը կամ պարագան: Դուք IMR-ի համար ոչինչ չեք վճարում:

Կարող եք բողոք ներկայացնել կամ դիմել IMR-ի համար, եթե մեր ծրագիրը.

- Մերժում, փոխում կամ հետաձգում է Medi-Cal ծառայությունը կամ բուժումը, քանի որ մեր ծրագիրը համարում է այն բժշկական տեսակետից ոչ անհրաժեշտ:
- Չի ապահովագրում Medi-Cal փորձական կամ հետազոտական բուժում լուրջ բժշկական վիճակի դեպքում:
- Վեճեր, թե արդյոք վիրաբուժական ծառայությունը կամ բուժօգործողությունը կոսմետիկ կամ վերականգնողական բնույթ են կրում:
- Չի վճարում արտակարգ իրավիճակի կամ հրատապ Medi-Cal ծառայությունների համար, որոնք դուք արդեն ստացել եք:
- Չի լուծել ձեր 1-ին մակարդակի բողոքարկումը Medi-Cal ծառայության համար 30 օրացուցային օրվա ընթացքում ստանդարտ բողոքարկման դեպքում, կամ 72 ժամվա ընթացքում կամ ավելի արագ, եթե ձեր առողջությունը դա պահանջում է՝ արագ բողոքարկման դեպքում:

ՆՇՈՒՄ. Եթե ձեր մատակարարը բողոքարկում է ձեզ համար, բայց մենք չենք ստանում ձեր Ներկայացուցիչի նշանակման ձևը, դուք պետք է կրկին ներկայացնեք ձեր բողոքարկումը մեզ, որպեսզի կարողանաք 2-րդ մակարդակի IMR հայց ներկայացնել Կառավարվող առողջապահական խնամքի բաժին, եթե ձեր բողոքարկումը չի ներառում անմիջական և լուրջ սպառնալիք ձեր առողջությանը, ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալով՝ ծանր ցավը, կյանքի, վերջույթների կամ հիմնական մարմնի գործառույթի հնարավոր կորուստը:

Հարցերի դեպքում գանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP) 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



Դուք իրավունք ունեք և՛ IMR, և՛ Նահանգային լսման, բայց դուք իրավունք չունեք IMR-ի համար, եթե դուք արդեն ապացույցներ եք ներկայացրել նույն հարցի վերաբերյալ Նահանգային լսման ժամանակ:

Շատ դեպքերում դուք պետք է բողոքարկում ներկայացնեք մեզ՝ Նախքան IMR դիմելը: Տե՛ս Էջ 213՝ մեր 1-ին մակարդակի բողոքարկման գործընթացի մասին տեղեկություններ ստանալու համար: Եթե համաձայն չեք մեր որոշման հետ, ապա կարող եք բողոք ներկայացնել DMHC-ին կամ DMHC Օգնության կենտրոնից IMR պահանջել:

Եթե ձեր բուժումը մերժվել է, քանի որ այն փորձնական կամ հետազոտական բնույթի է, ապա հարկավոր չէ մասնակցել մեր բողոքարկման գործընթացին, Նախքան IMR պահանջելը:

Եթե ձեր խնդիրը հրատապ է կամ ներառում է անհետաձգելի և լուրջ վտանգ ձեր առողջությանը, կամ դուք գտնվում եք սաստիկ ցավերի մեջ, ապա կարող եք այն անմիջապես ներկայացնել DMHC-ի ուշադրությանը՝ առանց Նախապես անցնելով մեր բողոքարկման գործընթացով:

Դուք պետք է **դիմեք IMR-ի** ձեր բողոքարկման վերաբերյալ մեր որոշման Նամակից հետո **6 ամսվա ընթացքում**: DMHC-ն կարող է ընդունել ձեր դիմումը 6 ամսից հետո, եթե կան հարգելի պատճառներ, ինչպես օրինակ՝ ձեր ունեցած բժշկական վիճակը, որը թույլ չէր տվել ձեզ դիմել IMR-ի համար 6 ամսվա ընթացքում, կամ մեր կողմից դուք չեք ստացել IMR գործընթացի համապատասխան ծանուցագիր:

IMR խնդրելու համար.

- Լրացրեք Անկախ բժշկական վերանայման դիմումի/բողոքի ձևը՝ www.dmhc.ca.gov/FileaComplaint/IndependentMedicalReviewComplaintForms.aspx կամ զանգահարեք DMHC Օգնության կենտրոն՝ 1-888-466-2219 հեռախոսահամարով: TTY օգտագործողները պետք է զանգահարեն 1-877-688-9891 հեռախոսահամարով:
- Եթե ունեք դրանք, ապա կցեք Նամակների կամ այլ փաստաթղթերի պատճենները, որտեղ մենք մերժել ենք ծառայությունը կամ պարագան: Սա կարող է արագացնել IMR գործընթացը: Ուղարկեք փաստաթղթերի պատճենները, այլ ոչ՝ բնօրինակները: Օգնության կենտրոնը չի կարող վերադարձնել որևէ փաստաթուղթ:
- Լրացրեք Լիազորված օգնականի ձևը, եթե որևէ մեկն օգնում է ձեզ ձեր IMR-ի հարցում: Դուք կարող եք ձևը ստանալ հետևյալ հղմամբ՝ www.dmhc.ca.gov/FileaComplaint/IndependentMedicalReviewComplaintForms.aspx կամ զանգահարել բաժնի Օգնության կենտրոն՝ 1-888-466-2219 հեռախոսահամարով: TTY օտվողները պետք է զանգահարեն 1-877-688-9891 հեռախոսահամարով:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP) 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



- Փոստով կամ ֆաքսով ուղարկեք ձեր ձևաթղթերը և կցորդները հետևյալ հասցեով՝

Help Center
Department of Managed Health Care
980 Ninth Street, Suite 500
Sacramento, CA 95814-2725
ՖԱԶՍ՝ 916-255-5241

- Դուք կարող եք նաև առցանց ներկայացնել ձեր Անկախ բժշկական վերանայման դիմումի/բողոքի ձևը և լիազորված օգնականի ձևը՝
www.dmhc.ca.gov/FileaComplaint.aspx

Եթե դուք իրավասու եք IMR-ի համար, DMHC-ն կվերանայի ձեր գործը և ձեզ նամակ կուղարկի 7 օրացուցային օրվա ընթացքում՝ տեղեկացնելով ձեզ, որ դուք որակավորվում եք IMR-ի համար: Ձեր դիմումը և օժանդակ փաստաթղթերը ձեր ծրագրից ստանալուց հետո IMR որոշումը կկայացվի 30 օրացուցային օրվա ընթացքում: Դուք պետք է ստանաք IMR որոշումն ամբողջական դիմումը ներկայացնելուց հետո 45 օրացուցային օրվա ընթացքում:

Եթե ձեր գործը հրատապ է, և դուք իրավասու եք IMR-ի համար, DMHC-ն կվերանայի ձեր գործը և ձեզ նամակ կուղարկի 2 օրացուցային օրվա ընթացքում՝ տեղեկացնելով ձեզ, որ դուք որակավորվում եք IMR-ի համար: Ձեր դիմումը և օժանդակ փաստաթղթերը ձեր ծրագրից ստանալուց հետո IMR որոշումը կկայացվի 3 օրացուցային օրվա ընթացքում: IMR-ի վերաբերյալ որոշումը դուք կստանաք լրացված հայտադիմումը ներկայացնելուց հետո 7 օրացուցային օրվա ընթացքում: Եթե բավարարված չէք IMR արդյունքներով, ապա դեռ կարող եք Նահանգային լսում պահանջել:

IMR-ը կարող է ավելի երկար տևել, եթե DMHC-ը չստանա բոլոր բժշկական արձանագրությունները, որոնք անհրաժեշտ են ձեր կամ ձեր բուժող բժշկից: Եթե Դուք այցելում եք Ձեր առողջական պլանում չընդգրկված բժիշկի, ստացեք նրանից բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և ուղարկեք մեզ: Ձեր առողջապահական ծրագիրը պարտավորված է ստանալ ձեր բժշկական արձանագրությունների պատճենները ձեր բժիշկներից, որոնք ցանցում են:

Եթե DMHC-ը որոշի, որ ձեր գործն իրավասու չէ IMR-ի համար, ապա DMHC-ը կվերանայի ձեր գործը հաճախորդների բողոքի իր սովորական գործընթացի միջոցով: Ձեր բողոքը պետք է լուծվի ամբողջական դիմումը ներկայացնելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում: Եթե ձեր բողոքը հրատապ է, ապա այն ավելի շուտ լուծում կստանա:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP) 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



(2) Նահանգային լսում

Դուք Նահանգային լսում եք խնդրում Medi-Cal ապահովագրական ծածկույթում ներառված ծառայությունների և պարագաների համար: Եթե ձեր բժիշկը կամ մեկ այլ մատակարար ծառայություն կամ պարագա է խնդրում, որը մենք չենք հաստատում, կամ եթե մենք չենք շարունակելու վճարել ձեր արդեն ունեցած ծառայության կամ պարագայի համար, և մենք ոչ ենք ասում ձեր 1-ին մակարդակի բողոքարկմանը, դուք իրավունք ունեք Նահանգային լսում պահանջել:

Շատ դեպքերում **դուք ունեք 120 օր՝ Նահանգային լսում պահանջելու համար** ձեզ ուղարկված «Բողոքարկման որոշման նամակ» ծանուցումը ստանալուց հետո:

ՆՇՈՒՄ. Եթե Նահանգային լսում եք պահանջում, քանի որ մենք տեղեկացրել ենք ձեզ, որ ձեր ընթացիկ ծառայությունը փոխվելու կամ դադարեցվելու է, **դուք ձեր խնդրանքը ներկայացնելու ավելի քիչ օրեր ունեք**, եթե ցանկանում եք շարունակել ստանալ այդ ծառայությունը, քանի դեռ Նահանգային լսումն ընթացքի մեջ է: Ավելի իմանալու համար ծանոթացեք «Կշարունակվեն արդյոք իմ նպաստները 2-րդ մակարդակի բողոքարկումների ընթացքում» 217 էջում:

Նահանգային լսում պահանջելու երկու տարբերակ կա.

1. Կարող եք լրացնել ծանուցագրի հակառակ կողմում գտնվող «Նահանգային լսման խնդրանքը»: Դուք պետք է տրամադրեք պահանջվող բոլոր տեղեկությունները, ինչպես օրինակ՝ ձեր լրիվ անունը, հասցեն, հեռախոսը, ձեր դեմ գործողության ձեռնարկած ծրագրի կամ վարչաշրջանի անունը, վեճի թեմա դարձած օգնության ծրագիր(ներ)ը, ինչպես նաև լսում պահանջելու մանրամասն պատճառը: Այնուհետև կարող եք ուղարկել ձեր հայցը հետևյալ տարբերակներից մեկով՝

- Վարչաշրջանի բարեկեցության բաժին՝ ծանուցման վրա նշված հասցեով:
- California-ի Սոցիալական ծառայությունների բաժանմունք այս հասցեով՝

State Hearings Division
P.O. Box 944243, Mail Station 9-17-37
Sacramento, California 94244-2430

- Նահանգային լսման բաժին Փաքսոյ՝ 916-651-5210 կամ 916-651-2789:

2. Կարող եք գանգահարել California-ի Սոցիալական ծառայությունների բաժին՝ 1-800-743-8525 հեռախոսահամարով: TTY օգտագործողները պետք է գանգահարեն 1-800-952-8349 համարով: Եթե որոշել եք Նահանգային լսում պահանջել հեռախոսով, ապա նկատի ունեցեք, որ հեռախոսային գծերը շատ ծանրաբեռնված են:

Յարգելի դեպքում գանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP) 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



Նահանգային լսումների գրասենյակը ձեզ տալիս է իր որոշումը գրավոր ձևով և բացատրում է պատճառները:

- Եթե Նահանգային լսումների բաժանմունքից ասում են **Այո** բժշկական ապրանքի կամ ծառայության խնդրանքին մի մասի կամ ամբողջությամբ բավարարման համար, ապա մենք պետք է լիազորենք կամ տրամադրենք ծառայությունը կամ ապրանքը նրանց որոշումը ստանալուց հետո **72 ժամվա ընթացքում**:
- Եթե Նահանգային լսումների բաժանմունքից ասում են **Ոչ** ձեր բողոքարկման մի մասի կամ ամբողջության համար, դա նշանակում է, որ նրանք համաձայն են, որ մենք չպետք է հաստատենք ձեր խնդրանքը (կամ ձեր խնդրանքի մի մասը) բժշկական օգնության ապահովագրման համար: Սա կոչվում է «որոշումը ուժի մեջ թողնել» կամ «բողոքարկումը մերժել»:

Եթե IRO-ի կամ Նահանգային լսումների բաժանմունքի որոշումը **Ոչ** է ձեր հարցման ամբողջի կամ մի մասի համար, դուք ունեք բողոքարկման լրացուցիչ իրավունքներ:

Եթե ձեր 2-րդ մակարդակի բողոքարկումը ուղարկվել է **IRO**, ապա դուք կարող եք կրկին բողոքարկել, միայն եթե ծառայության կամ պարագայի արժեքը հասնում է նվազագույն պահանջվող գումարին: ALJ-ը կամ փաստաբան դատավորը վարում է 3-րդ մակարդակի բողոքարկումը: **IRO-ից ստացված նամակը ձեզ կբացատրի լրացուցիչ բողոքարկման ձեր իրավունքները:**

Նամակը, որը դուք ստանում եք Նահանգային լսումների բաժանմունքից, նկարագրում է բողոքարկման հաջորդ տարբերակը:

Տե՛ս **Բաժին J**, Էջ 306` 2-րդ մակարդակից հետո ձեր բողոքարկման իրավունքների մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:

F5. Վճարումների հետ կապված խնդիրներ

Մենք թույլ չենք տալիս մեր ցանցի մատակարարներին հաշիվ ներկայացնել ապահովագրական ծածկույթում ներառված ծառայությունների և պարագաների համար: Այդպես է նույնիսկ եթե մենք մատակարարին վճարում ենք ավելի քիչ, քան մատակարարը գանձում է ապահովագրական ծածկույթում ներառված ծառայության կամ պարագայի համար: **Դուք երբեք չպետք է վճարեք որևէ հաշվի հաշվեկշռի համար:**

Եթե դուք հաշիվ եք ստանում ապահովագրական ծածկույթում ներառված ծառայությունների և պարագաների համար, ուղարկեք մեզ հաշիվը: Դուք չպետք է ինքներդ վճարեք այդ հաշիվը: Մենք կապ կհաստատենք մատակարարի հետ և կլուծենք խնդիրը: Բայց, եթե վճարեք հաշիվը, կարող եք փոխհատուցում ստանալ, եթե հետևել եք ծառայության կամ պարագայի ստացման կանոններին:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP) 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY` 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



Լրացուցիչ տեղեկությունների համար, տեսեք **Գլուխ 7`** ձեր *Անդամի ձեռնարկում*: Այն նկարագրում է իրավիճակներ, երբ ձեզ կարող է անհրաժեշտ լինել խնդրել մեզ վճարել ձեր փոխհատուցումը կամ վճարել այն հաշիվը, որը ստացել եք մատակարարից: Այնտեղ նաև ներկայացվում է, թե ինչպես է հարկավոր մեզ ուղարկել այն փաստաթղթերը, որոնք խնդրում են մեզ վճարում կատարել:

Եթե փոխհատուցում եք հայցում, ապա դուք ապահովագրության որոշում եք խնդրում: Մենք կստուգենք՝ ներառված է արդյոք, այն փոխհատուցվող ծառայությունը կամ պարագան, որի համար Դուք վճարել եք, ինչպես նաև կստուգենք, հետևել եք արդյոք Ձեր ապահովագրության վերաբերյալ բոլոր կանոններին:

- Եթե ծառայությունը կամ պարագան, որի համար վճարել եք, ներառված է ապահովագրական ծածկույթի մեջ, և դուք հետևել եք բոլոր կանոններին, ապա մենք կփոխանցենք ձեր մատակարարին ծառայության կամ պարագային համար վճարումը ձեր խնդրանքը ստանալուց հետո 60 օրացուցային օրվա ընթացքում: Այնուհետև, ձեր մատակարարը կուղարկի վճարումը ձեզ:
- Կամ, եթե դեռ չեք վճարել ծառայության կամ պարագայի համար, մենք կուղարկենք վճարումն անմիջապես մատակարարին: Եթե մենք ուղարկենք վճարումը, ապա դա համարժեք է ապահովագրության որոշման ձեր խնդրանքին **Այո** պատասխանելուն:
- Եթե ձեր կողմից վճարված ծառայությունը կամ պարագան ապահովագրված չէ, կամ դուք չեք հետևել բոլոր կանոններին, ապա մենք ձեզ նամակ կուղարկենք՝ տեղեկացնելով, որ չենք վճարելու ծառայության կամ պարագայի համար և բացատրելով՝ ինչու:

Եթե համաձայն չեք չվճարելու մեր որոշման հետ, **ապա կարող եք բողոքարկում ներկայացնել**: Հետևեք **Բաժին F3**, էջ 263-ում նկարագրված բողոքարկումների գործընթացին: Այս հրահանգներին հետևելիս ի նկատի ունենալ.

- Եթե դուք բողոքարկում ներկայացնեք փոխհատուցում ստանալու համար, ապա մենք պետք է պատասխանենք ձեր բողոքարկումը ստանալուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
- Դուք չեք կարող մեզանից արագ բողոքարկում խնդրել, եթե խնդրում եք ձեզ հետ վճարելժշկական խնամքի համար, որնը ստացել և վճարել եք ինքներդ:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP) 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



Եթե ձեր բողոքարկման մեր պատասխանը **Ոչ** է, և **Medicare** սովորաբար ապահովագրում է ծառայությունը կամ պարագան, մենք ձեր գործը կուղարկենք IRO: Մենք ձեզ նամակ կուղարկենք, եթե դա տեղի ունենա:

- Եթե IRO-ը փոխում է մեր որոշումն ու ասում է, որ մենք պետք է վճարենք ձեզ, ապա մենք պետք է վճարենք ձեզ կամ մատակարարին 30 օրացուցային օրվա ընթացքում: Եթե ձեր բողոքարկման պատասխանն **Այո** է՝ բողոքարկումների գործընթացի 2-րդ մակարդակից հետո ցանկացած փուլում, ապա մենք պարտավոր ենք ձեզ կամ առողջապահական խնամքի մատակարարին ուղարկել ձեր վճարումը 60 օրացուցային օրվա ընթացքում:
- Եթե IRO-ի պատասխանը ձեր բողոքարկմանը **Ոչ** է, ապա դա նշանակում է, որ նրանք համաձայն են ձեր խնդրանքը չհաստատելու վերաբերյալ մեր կայացրած որոշման հետ: Սա կոչվում է «որոշումը ուժի մեջ թողնել» կամ «բողոքարկումը մերժել»: Դուք կստանաք նամակ, որտեղ կբացատրվեն բողոքարկման լրացուցիչ իրավունքները, որոնք դուք կարող եք ունենալ: Կարդացեք **Բաժին J**-ը բողոքարկման լրացուցիչ մակարդակների մասին ավելին իմանալու համար:

Եթե ձեր բողոքարկման մեր պատասխանը **Ոչ** է, և Medi-Cal-ը սովորաբար ծածկում է ծառայությունը կամ ապրանքը, կարող եք ինքներդ 2-րդ մակարդակի բողոքարկում ներկայացնել: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս **Բաժին F4**, էջ 268:

G. Medicare Part D դեղատոմսով դեղեր

Ձեր՝ որպես մեր ծրագրի անդամի նպաստները ներառում են շատ դեղատոմսերային դեղերի ապահովագրություն: Այս դեղերի մեծ մասը Medicare Part D դեղեր են: Կան մի քանի դեղեր, որոնք Medicare Part D-ն չի ապահովագրում, սակայն դրանք կարող են ապահովագրվել Medi-Cal-ի կողմից: **Այս բաժինը վերաբերվում է միայն Medicare Part D դեղերի բողոքարկումներին:** Այս բաժնի մնացած հատվածում մենք կասենք «դեղ»՝ ամեն անգամ «Medicare Part D դեղ» ասելու փոխարեն:

Փոխհատուցվելու համար ձեր դեղը պետք է օգտագործվի բժշկական տեսակետից ընդունված ցուցումով: Դա նշանակում է, որ դեղի օգտագործումը հաստատված է ՄԱՆԻԿ և դեղորայքի վարչության (FDA) կողմից կամ սատարվում է որոշակի բժշկական գրականությամբ: Բժշկական տեսանկյունից ընդունված ցուցումների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ձեր *Անդամի ձեռնարկի* **Գլուխ 5**, Բաժին B3, էջ 184:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP) 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



G1. Medicare Part D ապահովագրության որոշումներ և բողոքարկումներ

Ահա ապահովագրության որոշումների օրինակներ, որոնք դուք կարող եք խնդրել մեզ կայացնել ձեր Medicare Part D դեղերի վերաբերյալ.

- Դուք մեզ խնդրում եք բացառություն անել, այդ թվում՝ խնդրելով՝
 - Ապահովագրել Medicare Part D դեղ, որը մեր Դեղերի ցուցակում չէ:
 - Մի կողմ դրեք դեղերի մեր ապահովագրության սահմանափակումը (օրինակ՝ ձեր ստացած քանակի սահմանափակումները)
- Դուք հարցնում եք մեզ, արդյոք ինչ-որ դեղ ապահովագրված է ձեզ համար (օրինակ, երբ ձեր դեղը ներկայացված է մեր ծրագրի Դեղերի ցուցակում, սակայն մենք պետք է հաստատում տրամադրենք, նախքան այն կապահովագրենք ձեզ համար):

ՆՇՈՒՄ. Եթե ձեր դեղատունն ասում է ձեզ, որ չի կարող տրամադրել ձեր դեղատոմսով դեղն ինչպես գրված է, ապա դեղատունը ձեզ գրավոր ծանուցում կտրամադրի, որտեղ բացատրվում է մեզ հետ կապվելու և ապահովագրության որոշում խնդրելու ձևերը:

Ձեր Medicare Part D դեղերի վերաբերյալ սկզբնական ապահովագրության որոշումը կոչվում է «**ապահովագրության որոշում**»:

- Դուք խնդրում եք մեզանից վճարել ձեր կողմից արդեն գնված դեղատոմսային դեղի համար: Սա հանդիսանում է վճարման վերաբերյալ ապահովագրության որոշման խնդրանք:

Եթե համաձայն չեք մեր կողմից ընդունված ապահովագրության որոշման հետ, ապա կարող եք բողոքարկել մեր որոշումը: Այս բաժինը ներկայացնում է ապահովագրության որոշման

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP) 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



խնդրանք ներկայացնելու և բողոքարկում պահանջելու ձևերը: Օգտագործեք ստորև բերված աղյուսակը՝ ձեզ օգնելու համար:

Այս իրավիճակներից ո՞րն է նկարագրում ձերը:			
<p>Ձեզ դեղ է հարկավոր, որը մեր Դեղերի ցուցակում չէ, կամ ցանկանում եք, որ մենք շրջանցենք ապահովագրված դեղերին վերաբերող որևէ կանոն կամ սահմանափակում:</p>	<p>Դուք ցանկանում եք, որ մենք ապահովագրենք Դեղերի ցուցակից մի դեղ, և ձեր կարծիքով, դուք համապատասխանում եք ծրագրի կանոններին կամ սահմանափակումներին (օրինակ՝ նախապես հավանություն ստանալը) ձեզ անհրաժեշտ դեղի համար:</p>	<p>Դուք ցանկանում եք խնդրել հետ վճարել ձեզ դեղի համար, որն արդեն ստացել եք և որի համար վճարել եք:</p>	<p>Մենք ձեզ ասել ենք, որ մենք չենք ապահովագրելու կամ վճարելու դեղի համար այնպես, ինչպես դուք եք ցանկանում:</p>
<p>Դուք կարող եք խնդրել մեզ բացառում անել: (Սա ապահովագրության որոշման մի ձև է):</p>	<p>Դուք կարող եք մեզ խնդրել ապահովագրության որոշում կայացնել:</p>	<p>Կարող եք մեզ խնդրել ձեզ հետ վճարել: (Սա ապահովագրության որոշման մի ձև է):</p>	<p>Դուք կարող եք բողոքարկում ներկայացնել: (Սա նշանակում է, որ դուք մեզ խնդրում եք վերանայել մեր որոշումը):</p>
<p>Սկսեք Բաժին G2, էջ 281, այնուհետև անցեք Բաժիններ G3, էջ 282 և G4, էջ 282:</p>	<p>Տե՛ս Բաժին G4, էջ 282:</p>	<p>Տե՛ս Բաժին G4, էջ 282:</p>	<p>Տե՛ս Բաժին G5, էջ 286:</p>

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP) 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



G2. Medicare Part D բացառումներ

Եթե մենք չենք ապահովագրում դեղն այնպես, ինչպես դուք կցանկանաք, կարող եք խնդրել մեզ «բացառում» անել: Եթե մենք մերժենք բացառման ձեր խնդրանքը, դուք կարող եք բողոքարկել մեր որոշումը:

Երբ դուք բացառություն եք խնդրում, ձեր բժիշկը կամ մեկ այլ դեղատոմս դուրս գրող պետք է բացատրի, թե որոնք են այն բժշկական պատճառները, որոնց հիման վրա պետք է հաստատվի բացառությունը:

Մեր Դեղերի ցանկում չընդգրկված դեղամիջոցի ապահովագրման խնդրանքը կամ դեղամիջոցի սահմանափակումը վերացնելու համար երբեմն կոչվում է «**ձևակերպական բացառություն**» խնդրել:

Ահա բացառության օրինակներ, որոնք դուք, կամ ձեր բժիշկը, կամ ուրիշ դուրս գրող կարող եք խնդրել մեզանից.

1. Ապահովագրել մի դեղ, որը մեր Դեղերի ցուցակում չէ

- Դուք չեք կարող բացառություն ստանալ դեղամիջոցի համար պահանջվող համավճարի գումարից:

2. Փոխհատուցված դեղամիջոցի սահմանափակման չեղարկում

- Լրացուցիչ կանոններ կամ սահմանափակումներ կիրառվում են մեր Դեղերի ցուցակում առկա որոշ դեղերի նկատմամբ (լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ձեր *Անդամի ձեռնարկի Գլուխ 5*, Բաժին C, էջ 186):
- Որոշակի դեղերի հավելյալ կանոններն ու սահմանափակումները ներառում են՝
 - Պահանջ՝ օգտագործել դեղի ջններիկ տարբերակն ապրանքանիշային դեղի փոխարեն:
 - Նախապես մեր ծրագրի հավանություն ստանալ, նախքան մենք կհամաձայնվենք ապահովագրել դեղը: Սա երբեմն կոչվում է «նախնական թույլտվություն (PA)»:
 - Պետք է նախ փորձեք այլ դեղ՝ նախքան մենք կհամաձայնվենք փոխհատուցել ձեր ուզած դեղը: Սա երբեմն կոչվում է «փուլային թերապիա»:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP) 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



- Զանակի սահմանափակումներ: Որոշ դեղերի համար դեղի քանակի սահմանափակում կա, որը դուք կարող եք ստանալ:

G3. Կարևոր բաներ, որոնք պետք է իմանալ բացառում խնդրելու մասին

Ձեր բժիշկը կամ դեղատոմս դուրս գրողը պետք է մեզ տեղեկացնի բժշկական պատճառների մասին

Ձեր բժիշկը կամ մեկ այլ դեղատոմս դուրս գրողը մեզ պետք է հայտարարագիր տա՝ բացատրելով բացառություն պահանջելու բժշկական պատճառները: Ավելի արագ որոշում կայացնելու համար ներառեք այս բժշկական տեղեկատվությունը ձեր բժշկի կամ այլ նշանակողից, երբ դուք բացառություն եք խնդրում:

Մեր Դեղերի ցուցակը ներառում է մեկից ավելի դեղ յուրաքանչյուր հատուկ վիճակի բուժման համար: Սրանք կոչվում են «այլընտրանքային» դեղեր: Եթե այլընտրանքային դեղը նույնքան արդյունավետ է, որքան Ձեր պահանջվող դեղը, և չի առաջացնում ավելի շատ կողմնակի ազդեցություններ կամ այլ առողջական խնդիրներ, ապա մենք սովորաբար **չենք** հաստատի բացառության Ձեր հայցը:

Մենք բացառության մասին ձեր հայցին Այո կամ Ոչ կպատասխանենք:

- Եթե մենք **Այո** ասենք բացառության ձեր խնդրանքին, ապա բացառությունը սովորաբար ուժի մեջ է մտնում մինչև օրացուցային տարվա վերջ: Այս պայմանը կիրառելի է այնքան ժամանակ, քանի դեռ ձեր բժիշկը նշանակում է այդ դեղը ձեզ, և դեղը շարունակում է լինել ապահով և արդյունավետ ձեր վիճակի բուժման համար:
- Եթե մենք ասենք **Ոչ** ձեր բացառության խնդրանքին, դուք կարող եք բողոքարկել: Բողոքարկում ներկայացնելու տեղեկությունների համար տե՛ս **Բաժին G5**, էջ՝ 286, եթե մենք ասենք **Ոչ**:

Հաջորդ բաժինը ներկայացնում է՝ ինչպես խնդրել ապահովագրության որոշում, ներառյալ՝ բացառություն:

G4. Ապահովագրության որոշում պահանջելը, ներառյալ բացառությունը

- Հարցրեք ապահովագրության որոշման տեսակը, որը ցանկանում եք՝ գանգահարելով 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711), գրավոր կամ մեզ ֆաքս ուղարկեք: Դուք, ձեր ներկայացուցիչը կամ ձեր բժիշկը (կամ մեկ այլ դեղատոմս դուրս գրող) կարող են անել սա: Ներառեք ձեր անունը, կոնտակտային տվյալները և ձեր հայցի վերաբերյալ տեղեկություններ: Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.:

Հարցերի դեպքում գանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP) 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



- Ապահովագրության որոշում կարող եք խնդրել դուք, ձեր բժիշկը (կամ մեկ այլ դեղատոմս դուրս գրող) կամ ձեր անունից հանդես եկող որևէ այլ անձ: Դուք կարող եք նաև փաստաբան վարձել՝ ձեր անունից հանդես գալու համար:
- Տե՛ս **Բաժին E3**, էջ 257՝ պարզելու, թե ինչպես կարելի է որևէ մեկին նշանակել որպես ձեր ներկայացուցիչ:
- Ձեզ հարկավոր չէ գրավոր թույլտվություն տալ ձեր բժշկին կամ այլ նշանակողին՝ ձեր անունից ապահովագրական որոշում խնդրելու համար:
- Եթե ցանկանում եք խնդրել ձեզ հետ վճարել դեղի համար, անցեք մեր *Անդամի ձեռնարկի Գլուխ 7*-ը:
- Եթե դուք բացառում եք խնդրում, տվեք մեզ «աջակցող հայտարարություն»:
Աջակցող հայտարարությունը ներառում է ձեր բժշկի կամ այլ դեղատոմս դուրս գրողի բժշկական պատճառները բացառման խնդրանքի համար:
- Ձեր բժիշկը կամ այլ դեղատոմս դուրս գրողը կարող են ուղարկել մեզ այդ աջակցող հայտարարագիրը ֆաքսով կամ փոստով: Նրանք կարող են նաև մեզ հայտնել հեռախոսով, ապա քաղվածքը ֆաքսով կամ փոստով ուղարկել:

Եթե ձեր առողջությունը պահանջում է, ապա մեզանից խնդրեք «արագ ապահովագրության որոշում»

Մենք կօգտագործենք մեր «ստանդարտ վերջնաժամկետները», եթե «արագ վերջնաժամկետներ» օգտագործելու վերաբերյալ որոշում կայացրած չլինենք:

- **Ստանդարտ ապահովագրության որոշում** նշանակում է, որ ձեզ կպատասխանենք՝ ձեր բժշկի հայտարարագիրը ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում:
- **Արագ ապահովագրության որոշում** նշանակում է, որ ձեզ կպատասխանենք՝ ձեր բժշկի հայտարարագիրը ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում:

«Արագ ապահովագրման որոշումը» կոչվում է «**արագացված ծածկույթի որոշում**»:

Կարող եք արագ ապահովագրման որոշում ստանալ, եթե՝

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP) 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



- Դա դեղամիջոցի համար է, որը դուք չեք ստացել: Դուք չեք կարող խնդրել ապահովագրության արագ որոշում, եթե խնդրում եք ձեզ հետ վճարել դեղի համար, որն արդեն գնել եք:
- Ձեր առողջությունը կամ գործելու կարողությունը լրջորեն կվնասվի, եթե մենք օգտագործենք ստանդարտ ժամկետները:

Եթե ձեր բժիշկը կամ այլ նշանակող մեզ ասի, որ ձեր առողջությունը պահանջում է արագ ապահովագրման որոշում, մենք համաձայնում ենք և տալիս ենք այն: Մենք ձեզ նամակ ենք ուղարկում, որը ձեզ տեղեկացնում է.

- Եթե դուք ինքներդ, առանց ձեր բժշկի կամ այլ նշանակողի օգնության, պահանջեք արագ ապահովագրության որոշում, ապա մենք կորոշենք՝ արդյոք դուք ստանում եք արագ ապահովագրության որոշում, թե ոչ:
- Եթե մենք որոշում ենք, որ ձեր բժշկական վիճակը չի բավարարում արագ ապահովագրության որոշման պահանջներին, ապա փոխարենը կկիրառենք ստանդարտ վերջնաժամկետներ:
 - Մենք ձեզ նամակ ենք ուղարկում, որը ձեզ տեղեկացնում է. Նամակում նաև ասվում է, թե ինչպես բողոքել մեր որոշման վերաբերյալ:
 - Դուք կարող եք արագ բողոք ներկայացնել և ստանալ ձեր բողոքի պատասխանը 24 ժամվա ընթացքում: Բողոքների, ներառյալ արագ բողոքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս **Բաժին K**, էջ 310:

Ապահովագրության արագ որոշման վերջնաժամկետները

- Եթե մենք կիրառում ենք արագ վերջնաժամկետները, պետք է տրամադրենք մեր պատասխանը ձեր հայցը ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում: Եթե դուք արագ բողոքարկում խնդրեք, մենք պետք է պատասխանենք ձեր բողոքարկումը ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում: Մենք կպատասխանենք ձեզ ավելի շուտ, եթե ձեր առողջական վիճակը պահանջի:
- Եթե մենք բաց ենք թողնում այս վերջնաժամկետը, ձեր հայցը կուղարկենք 2-րդ մակարդակի բողոքարկման՝ IRO-ի կողմից վերանայման համար: 2-րդ մակարդակի բողոքարկումների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս **Բաժին G6**, էջ 289:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP) 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



- Եթե մենք ասենք **Այո** ձեր հարցման մի մասի մի մասի կամ ամբողջի համար, մենք ձեզ ապահովագրություն ենք տրամադրում ձեր հարցումը կամ ձեր բժշկի աջակցող հայտարարությունը ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում:
- Եթե մենք ասենք **Ոչ** ձեր խնդրանքի մի մասի կամ ամբողջության բավարարման համար, ապա Ձեզ նամակ կուղարկենք՝ նշելով պատճառները՝ Նամակը նաև պատմում է ձեզ, թե ինչպես կարող եք բողոքարկել:

Ստանդարտ ապահովագրության որոշման վերջնաժամկետները դեղի համար, որը չեք ստացել:

- Եթե մենք կիրառում ենք ստանդարտ վերջնաժամկետները, պետք է տրամադրենք մեր պատասխանը ձեր հայցը ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում: Եթե դուք բացառում խնդրեք, մենք պետք է պատասխանենք ձեր բժշկի աջակցող հայտարարությունը ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում: Մենք կպատասխանենք ձեզ ավելի շուտ, եթե ձեր առողջական վիճակը պահանջի:
- Եթե մենք բաց ենք թողնում այս վերջնաժամկետը, ձեր հայցը կուղարկենք 2-րդ մակարդակի բողոքարկման՝ IRO-ի կողմից վերանայման համար:
- Եթե մենք ասենք **Այո** ձեր հարցման մի մասի մի մասի կամ ամբողջի համար, մենք ձեզ ապահովագրություն ենք տրամադրում բացառման համար ձեր հարցմանը կամ ձեր բժշկի աջակցող հայտարարությունը ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում:
- Եթե մենք ասենք **Ոչ** ձեր խնդրանքի մի մասի կամ ամբողջության բավարարման համար, ապա Ձեզ նամակ կուղարկենք՝ նշելով պատճառները՝ Նամակում նաև ասվում է, թե ինչպես պետք է բողոքարկել:

«Ստանդարտ ապահովագրության որոշման» վերջնաժամկետները դեղի համար, որն արդեն գնել եք

- Մենք պետք է պատասխանենք ձեզ ձեր հայցը ստանալուց հետո 14 օրացուցային օրվա ընթացքում:
- Եթե մենք բաց ենք թողնում այս վերջնաժամկետը, ձեր հայցը կուղարկենք 2-րդ մակարդակի բողոքարկման՝ IRO-ի կողմից վերանայման համար:
- Եթե մենք ասենք **Այո** ձեր հարցման մի մասի կամ ամբողջությամբ, մենք ձեզ հետ կվճարենք 14 օրացուցային օրվա ընթացքում:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP) 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



- **Եթե** մենք ասենք **Ոչ** ձեր խնդրանքի մի մասի կամ ամբողջության բավարարման համար, ապա Ձեզ նամակ կուղարկենք՝ նշելով պատճառները՝ Նամակում նաև ասվում է, թե ինչպես պետք է բողոքարկել:

G5. Ինչպես ներկայացնել 1-ին մակարդակի բողոքարկում

Medicare Part D դեղի ապահովագրության որոշման վերաբերյալ ծրագրին արվող բողոքարկումը կոչվում է ծրագրի «**կրկնակի եզրակացություն**»:

- Սկսեք ձեր **ստանդարտ** կամ **արագ բողոքարկումը**՝ գանգահարելով 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝711), մեզ գրելով կամ ֆաքս ուղարկելով: Դուք, ձեր ներկայացուցիչը կամ ձեր բժիշկը (կամ մեկ այլ դեղատոմս դուրս գրող) կարող են անել սա: Ներառեք ձեր անունը, կոնտակտային տվյալները և ձեր բողոքարկման վերաբերյալ տեղեկությունները:
- Դուք պետք է բողոքարկում ներկայացնեք մեր որոշման նամակի վրա նշված ամսաթվից **60 օրացուցային օրվա** ընթացքում:
- Եթե բաց թողնեք այս վերջնաժամկետը և դրա համար հարգելի պատճառ ունենաք, ապա մենք, հնարավոր է, ձեզ տրամադրենք հավելյալ ժամանակ բողոքարկում ներկայացնելու համար: Լավ պատճառների օրինակներ են այնպիսի բաներ, ինչպիսիք են, օրինակ, դուք լուրջ հիվանդություն եք ունեցել կամ մենք ձեզ սխալ տեղեկատվություն ենք տվել վերջնաժամկետի վերաբերյալ: Բացատրեք, թե ինչու է ձեր բողոքարկումն ուշանում, երբ բողոքարկում եք:
- Դուք իրավունք ունեք պահանջել ձեր բողոքարկմանը վերաբերող տեղեկության պատճենը: Դուք և ձեր բժիշկը կարող եք նաև մեզ տրամադրել հավելյալ տեղեկություններ՝ ձեր բողոքարկումը հիմնավորելու համար:

Եթե ձեր առողջությունը պահանջում է, ապա խնդրեք «արագ բողոքարկում»:

Արագ բողոքարկումը կոչվում է նաև «**արագացված վերաորոշում**»:

- Եթե դուք բողոքարկում եք մեր կողմից կայացրած որոշումը դեռ չստացված դեղի համար, ապա դուք և ձեր բժիշկը կամ այլ դեղատոմս դուրս գրողը պետք է որոշեք, թե արդյոք ունեք «արագ բողոքարկման» կարիք:

Չարցերի դեպքում գանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP) 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Չկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



- Արագ բողոքարկման պահանջները նույնն են, ինչ արագ ապահովագրման որոշման պահանջները: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս **Բաժին G4**, էջ 282:

Մենք դիտարկում ենք ձեր բողոքարկումը և տալիս ենք մեր պատասխանը:

- Մենք վերանայում ենք ձեր բողոքարկումը ևս մեկ անգամ ավելի ուշադիր ուսումնասիրում ենք ապահովագրության ձեր հայցի վերաբերյալ տեղեկությունները:
- Մենք ստուգում ենք հասկանալու՝ արդյոք հետևել ենք կանոններին, երբ ձեր խնդրանքին **Ոչ** ենք ասել:
- Մենք կարող ենք կապ հաստատել ձեր, ձեր բժշկի կամ այլ դեղատոմս դուրս գրողի հետ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:

1-րդ մակարդակում արագ բողոքարկման վերջնաժամկետները

- Եթե մենք կիրառում ենք ստանդարտ վերջնաժամկետները, պետք է տրամադրենք մեր պատասխանը ձեր հայցը ստանալուց հետո **72 ժամվա** ընթացքում:
 - Մենք կպատասխանենք ձեզ ավելի շուտ, եթե ձեր առողջական վիճակը պահանջի:
 - Եթե մենք չենք պատասխանում 72 ժամվա ընթացքում, մենք ձեր հայցը կուղարկենք 2-րդ մակարդակի բողոքարկման գործընթաց: Որից հետո IRO-ն կուսումնասիրի այն: Վերանայող կազմակերպության և 2-րդ մակարդակի բողոքարկման գործընթացի մասին տեղեկությունների համար տե՛ս **Բաժին G6**, էջ 289:
- Եթե մենք ասենք **Այո** ձեր խնդրանքի մի մասի կամ ամբողջության բավարարման համար, մենք պետք է տրամադրենք այն ապահովագրությունը, որը մենք համաձայնել ենք տրամադրել ձեր բողոքարկումը ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում:
- Եթե մենք ասենք **Ոչ** ձեր խնդրանքի մի մասի կամ ամբողջության բավարարման համար, ապա նամակ կուղարկենք, որը բացատրում է պատճառները և ասում է, թե ինչպես կարող եք բողոքարկել:

1-րդ մակարդակում ստանդարտ բողոքարկման վերջնաժամկետները

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP) 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



- Եթե մենք օգտագործում ենք ստանդարտ ժամկետները, մենք պետք է ձեզ մեր պատասխանը տանք **7 օրացուցային օրվա ընթացքում** այն բանից հետո, երբ մենք կստանանք ձեր բողոքարկումը դեղի համար, որը դուք չեք ստացել:
- Մենք ձեզ ավելի շուտ ենք տալիս մեր որոշումը, եթե դուք չեք ստացել դեղը, և ձեր առողջական վիճակը պահանջում է դա: Եթե վստահ եք, որ ձեր առողջությունը պահանջում է, ապա խնդրեք արագ բողոքարկում:
 - Եթե մենք որոշման մասին չենք հայտնում 7 օրացուցային օրվա ընթացքում, մենք ձեր հայցը կուղարկենք 2-րդ մակարդակի բողոքարկման համար: Որից հետո IRO-ն կուսումնասիրի այն: Վերանայող կազմակերպության և 2-րդ մակարդակի բողոքարկման գործընթացի մասին տեղեկությունների համար տե՛ս **Բաժին G6**, էջ 289:

Եթե մենք ասենք **Այո** ձեր խնդրանքի մի մասի կամ ամբողջության համար.

- Մենք պետք է **տրամադրենք ապահովագրությունը**, որը պայմանավորվել ենք տրամադրել այնքան արագ, որքան ձեր առողջությունը պահանջում է, բայց **ոչ ուշ, քան 7 օրացուցային օր** ձեր բողոքարկումը ստանալուց հետո:
- Մենք պետք է **ուղարկենք ձեզ վճարում** ձեր գնած դեղամիջոցի համար **30 օրացուցային օրվա ընթացքում** ձեր բողոքարկումը ստանալուց հետո:

Եթե մենք ասենք **Ոչ** ձեր խնդրանքի մի մասի կամ ամբողջի բավարարման համար.

- Մենք ձեզ նամակ ենք ուղարկում, որը բացատրում է պատճառները և պատմում, թե ինչպես կարող եք բողոքարկել:
- Մենք պետք է ձեզ պատասխան տանք ձեր գնած դեղամիջոցի համար ձեզ փոխհատուցելու վերաբերյալ **14 օրացուցային օրվա ընթացքում**՝ ձեր բողոքարկումը ստանալուց հետո:
 - Եթե մենք որոշում չենք ներկայացնում 14 օրացուցային օրվա ընթացքում, մենք ձեր խնդրանքը պետք է կուղարկենք 2-րդ մակարդակի բողոքարկման: Որից հետո IRO-ն կուսումնասիրի այն: Վերանայող կազմակերպության և 2-րդ մակարդակի բողոքարկման գործընթացի մասին տեղեկությունների համար տե՛ս **Բաժին G6**, էջ 289:
- Եթե մենք ասենք **Այո** ձեր խնդրանքի մի մասի կամ ամբողջության բավարարման համար, ապա մենք պետք է ձեզ վճարենք ձեր խնդրանքը ստանալուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:

Հարցերի դեպքում գանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP) 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



- Եթե մենք ասենք **Ոչ** ձեր խնդրանքի մի մասի կամ ամբողջության բավարարման համար, ապա նամակ կուղարկենք, որը բացատրում է պատճառները և ասում է, թե ինչպես կարող եք բողոքարկել:

G6. Ինչպես ներկայացնել 2-րդ մակարդակի բողոքարկում

Եթե մենք ասենք **Ոչ** ձեր 1-ին մակարդակի բողոքարկմանը, դուք կարող եք ընդունել մեր որոշումը կամ մեկ այլ բողոքարկում ներկայացնել: Եթե որոշեք մեկ այլ բողոքարկում ներկայացնել, դուք օգտագործում եք 2-րդ մակարդակի բողոքարկման գործընթացը: **IRO-ը** վերանայում է մեր որոշումը, երբ մենք ասացինք **Ոչ** ձեր առաջին բողոքարկմանը: Այս կազմակերպությունն է որոշում, թե արդյոք մենք պետք է փոխենք մեր որոշումը:

«Ստուգող անկախ կազմակերպության» (IRO) պաշտոնական անվանումը «**Ստուգող անկախ մարմին**» է, որը երբեմն կոչվում է «**IRE**»:

2-րդ մակարդակի բողոքարկում ներկայացնելու համար դուք, ձեր ներկայացուցիչը կամ ձեր բժիշկը կամ այլ ղեկավարող ղուրս գրող պետք է **գրավոր** դիմեք IRO-ին և խնդրեք վերանայել ձեր գործը:

- Եթե մենք ասենք **Ոչ** ձեր 1-ին մակարդակի բողոքարկմանը, նամակը, որը մենք ուղարկում ենք ձեզ, ներառում է **հրահանգներ, թե ինչպես կարելի է 2-րդ մակարդակի բողոքարկում** ներկայացնել IRO-ին: Հրահանգները ցույց են տալիս, թե ով կարող է 2-րդ մակարդակի բողոքարկում ներկայացնել, ինչ ժամկետներ պետք է հետևեք և ինչպես հասնել կազմակերպությանը:
- Երբ դուք բողոքարկում եք IRO-ին, մենք ձեր բողոքարկման մասին մեր ունեցած տեղեկություններն ուղարկում ենք կազմակերպությանը: Այս տեղեկությունները կոչվում են ձեր «գործի ֆայլը»: **Դուք ունեք ձեր գործի նյութերի անվճար պատճենի իրավունք:**
- Դուք իրավունք ունեք IRO-ին տրամադրել հավելյալ տեղեկություններ ձեր բողոքարկումը հիմնավորելու համար:

IRO-ը վերանայում է ձեր Medicare Part D-ի 2-րդ մակարդակի բողոքարկումը և գրավոր պատասխան է տալիս ձեզ: IRO-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս **Բաժին F4**, էջ 268:

2-րդ մակարդակում արագ բողոքարկման վերջնաժամկետները

Եթե ձեր առողջությունը պահանջում է, ապա IRO-ից խնդրեք արագ բողոքարկում:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP) 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



- Եթե նրանք համաձայնում են արագ բողոքարկմանը, նրանք պետք է պատասխան տան ձեր բողոքարկման հարցումը ստանալուց հետո **72 ժամվա ընթացքում**:
- Եթե նրանք **Այո** ասեն ձեր խնդրանքի մի մասի կամ ամբողջի համար, մենք պետք է տրամադրենք հաստատված դեղի ապահովագրությունը IRO-ի որոշումը ստանալուց հետո **24 ժամվա ընթացքում**:

2-րդ մակարդակում ստանդարտ բողոքարկման վերջնաժամկետները

Եթե դուք ունեք ստանդարտ բողոքարկում 2-րդ մակարդակում, IRO-ը պետք է ձեզ պատասխան տա.

- **7 օրացուցային օրվա ընթացքում** այն բանից հետո, երբ նրանք կստանան ձեր բողոքարկումը դեղի համար, որը դուք չեք ստացել:
- **14 օրացուցային օրվա ընթացքում** այն բանից հետո, երբ նրանք կստանան ձեր բողոքարկումը ձեր գնած դեղի դիմաց փոխհատուցման համար:

Եթե IRO-ն ասի **Այո** ձեր խնդրանքի մի մասի կամ ամբողջի համար.

- Մենք պետք է տրամադրենք դեղի հաստատված ապահովագրությունը IRO-ի որոշումը ստանալուց հետո **72 ժամվա ընթացքում**:
- Մենք պետք է փոխհատուցենք ձեզ դեղի համար, որը դուք գնել եք IRO-ի որոշումը ստանալուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
- Եթե IRO-ի պատասխանը ձեր բողոքարկմանը **Ոչ** է, ապա դա նշանակում է, որ նրանք համաձայն են ձեր խնդրանքը չհաստատելու վերաբերյալ մեր կայացրած որոշման հետ: Սա կոչվում է «որոշումը ուժի մեջ թողնել» կամ «բողոքարկումը մերժել»:

Եթե IRO-ը **Ոչ** է ասում ձեր 2-րդ մակարդակի բողոքարկմանը, ապա դուք իրավունք ունեք 3-րդ մակարդակի բողոքարկման, եթե ձեր խնդրած դեղի ապահովագրության դուրսային արժեքը համապատասխանում է նվազագույն դուրսային արժեքին: Եթե ձեր կողմից պահանջվող դեղերի ապահովագրության դուրսային արժեքը պակաս է պահանջվող նվազագույնից, դուք չեք կարող այլ բողոքարկում ներկայացնել: Այդ դեպքում 2-րդ մակարդակի բողոքարկման որոշումը վերջնական է: IRO-ը ձեզ նամակ է ուղարկում, որը հայտնում է ձեզ 3-րդ մակարդակի բողոքարկումը շարունակելու համար անհրաժեշտ դուրսի նվազագույն արժեքը:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP) 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



Եթե ձեր հարցման դոլարային արժեքը համապատասխանում է պահանջին, ապա դուք ընտրում եք, թե արդյոք ցանկանում եք շարունակել ձեր բողոքարկումը:

- Բողոքարկման գործընթացում 2-րդ մակարդակից հետո կա երեք լրացուցիչ մակարդակ:
- Եթե IRO-ն ասի **Ոչ** ձեր 2-րդ մակարդակի բողոքարկմանը, և դուք բավարարում եք բողոքարկման գործընթացը շարունակելու պահանջին, ապա դուք.
 - Որոշում եք, թե արդյոք ցանկանում եք 3-րդ մակարդակի բողոքարկում ներկայացնել:
 - 3-րդ մակարդակի բողոքարկում ներկայացնելու վերաբերյալ մանրամասների համար տեսեք 2-րդ մակարդակի բողոքարկումից հետո IRO-ի կողմից ուղարկված նամակը:

ALJ-ը կամ փաստաբան դատավորը վարում է 3-րդ մակարդակի բողոքարկումը: 3-րդ, 4-րդ և 5-րդ մակարդակների բողոքարկումների մասին տեղեկությունների համար տե՛ս **Բաժին J**, էջ 306:

H. Հիվանդանոցում ավելի երկար մնալու խնդրանքի ապահովագրության հայց

Երբ ընդունվում եք հիվանդանոց, դուք իրավունք ունեք ստանալ ձեր բոլոր ապահովագրված հիվանդանոցային ծառայությունները, որոնք անհրաժեշտ են ձեր հիվանդությունը կամ վնասվածքը ախտորոշելու կամ բուժելու համար: Մեր ծրագրի հիվանդանոցային ապահովագրության մասին լրացուցիչ տեղեկությունների համար տեսեք ձեր *Անդամների ձեռնարկի Գլուխ 4*, Բաժին D, էջ 96:

Հիվանդանոցում ապահովագրության գտնվելու ընթացքում ձեր բժիշկը և հիվանդանոցի անձնակազմն աշխատելու է ձեզ հետ՝ ձեզ հիվանդանոցից դուրս գրելու օրվան նախապատրաստելու ուղղությամբ: Նրանք նաև օգնում են ձեզ կազմակերպել ձեր խնամքը, որի կարիքը դուք կարող եք ունենալ դուրս գրվելուց հետո:

- Հիվանդանոցից դուրս գրման օրը կոչվում է «դուրսգրման ամսաթիվ»:
- Ձեր բժիշկը կամ հիվանդանոցի անձնակազմը կտեղեկացնի՝ որն է ձեր դուրսգրման օրը:

Հարցերի դեպքում գանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP) 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



Եթե կարծում եք, որ ձեզ շատ շուտ են խնդրում հեռանալ հիվանդանոցից կամ մտահոգված եք հիվանդանոցից դուրս գալուց հետո ձեր խնամքի համար, կարող եք խնդրել ավելի երկար մնալ հիվանդանոցում: Այս բաժինը նկարագրում է խնդրանք ներկայացնելու եղանակները:

Չնայած այս **Բաժին H-ում** քննարկված բողոքարկումներին, հնարավոր է, որ դուք նաև կարողանաք բողոք ներկայացնել և DMHC-ից խնդրել Անկախ բժշկական վերանայում՝ ձեր հիվանդանոցային բուժումը շարունակելու համար: Խնդրում ենք ստուգել **Բաժին F4**, Էջ 268՝ պարզելու, թե ինչպես կարող եք բողոք ներկայացնել կամ DMHC-ից Անկախ բժշկական վերանայում խնդրել: Դուք կարող եք Անկախ բժշկական վերանայում խնդրել՝ ի լրացում 3-րդ մակարդակի բողոքարկմանը կամ դրա փոխարեն:

H1. Ձեր Medicare իրավունքների մասին տեղեկանալը

Ձեր հիվանդանոց ընդունվելուց հետո երկու օրվա ընթացքում հիվանդանոցում ինչ-որ մեկը, օրինակ՝ բուժքույրը կամ գործի աշխատողը, ձեզ գրավոր ծանուցում կտա, որը կոչվում է «Կարևոր հաղորդագրություն Medicare-ից ձեր իրավունքների մասին»: Medicare ունեցող յուրաքանչյուր ոք ստանում է այս ծանուցման պատճենը, երբ նրանք ընդունվում են հիվանդանոց:

Եթե չեք ստանում ծանուցագիրը, խնդրեք այն հիվանդանոցի աշխատակիցներից որևէ մեկից: Եթե օգնության կարիք ունեք, զանգահարեք Անդամների սպասարկում Էջի ներքևում գտնվող համարներով: Կարող եք նաև զանգահարել 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: TTY օգտագործողները պետք է զանգահարեն 1-877-486-2048 հեռախոսահամարով:

- **Ուշադիր կարդացեք** այս ծանուցագիրը և հարցեր տվեք, եթե չեք հասկանում: Կարևոր հաղորդագրությունը տեղեկացնում է ձեր՝ որպես հիվանդանոցային հիվանդի իրավունքների մասին, ներառյալ ձեր իրավունքները:
 - Ստանալու Medicare-ի կողմից ապահովագրված ծառայություններ հիվանդանոցում գտնվելու ընթացքում և դրանից հետո: Դուք իրավունք ունեք տեղեկացված լինել այն մասին, թե որոնք են այդ ծառայությունները, ով է վճարելու դրանց համար, և որտեղ կարող եք ստանալ դրանք:
 - Մասնակցելու որոշումներին՝ ձեր հիվանդանոցում մնալու տևողության վերաբերյալ:
 - Իմանալու, ուր ներկայացնել հիվանդանոցային խնամքի որակի վերաբերյալ ձեր մտահոգությունները:

Հարցերի դեպքում զանգահարեք Wellcare Dual Align (HMO D-SNP) 1-800-431-9007 հեռախոսահամարով (TTY՝ 711): Հոկտեմբերի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից կիրակի, 8 a.m. - 8 p.m.-ը: Ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8 a.m. - 8 p.m.-ը: Չանգն անվճար է: **Լրացուցիչ տեղեկությունների համար** այցելեք www.wellcare.com/healthnetCA:



- Բողոքարկելու, եթե կարծում եք, որ ձեզ հիվանդանոցից դուրս են գրում ժամանակից շուտ:
- **Ստորագրեք ծանուցագիրը՝** հաստատելով, որ ստացել եք այն և հասկանում եք ձեր իրավունքները:
 - Դուք կամ ձեր անունից գործող որևէ մեկը կարող եք ստորագրել ծանուցումը:
 - Ծանուցման ստորագրումը **միայն** ցույց է տալիս, որ դուք ստացել եք տեղեկատվությունը: Ստորագրելը **չի** նշանակում, որ համաձայն եք ձեր բժշկի կամ հիվանդանոցի անձնակազմի հայտնած դուրսգրման օրվա հետ:
- **Պահեք ստորագրված** ծանուցագրի ձեր պատճենը, որպեսզի ունենաք այնտեղ բերված տեղեկությունները, երբ դրանք ձեզ պետք գան:

Եթե դուք ստորագրեք ծանուցումը հիվանդանոցից դուրս գալու օրվանից ավելի քան երկու օր առաջ, դուք կստանաք ևս մեկ օրինակ՝ Նախքան դուրս գրվելը:

Կարող եք Նախօրոք դիտել ծանուցման պատճենը, եթե՝

- Չանգահարեք Անդամների սպասարկման բաժին Էջի ներքևում գտնվող համարներով:
